

## Պոլ Ռիգեր

### ՓԱԽՈՒՏ ԱՎԵՏՅԱՑ ԵՐԿՐԻՑ

1.

Մենք արդեն երկու անգամ սրճարանից սրճարան էինք տեղափոխվել: Երբ Մարտինը երրորդ անգամ զանգեց ու տվեց հաջորդ սրճարանի անունը, խաղն ինձ ձանձրացրեց, ու ես հրաժարվեցի: Նախորդ անգամներն էլ հաճույքով չէի համաձայնել, քանի որ ֆուտբոլի Եվրոպայի առաջնության հետաքրքիր հանդիպում կար, որին աչքի պոշով հետեւում էի սրճարանի մեծ էկրանին:

Աննան, որ ֆուտբոլի սիրահար չէր, համոզեց ինձ նորից զիշել Մարտինին՝ ենթադրելով, որ նրա այս անգամվա պատմությունը բացառիկ հետաքրքիր է լինելու, եւ ուզում է մեզ մի քիչ տանջել՝ «թանկացնելով իրեն»: Մի կողմից, ես էլ, իհարկե, պետք է որ ուրախանայի Աննայի հետ ավելի երկար մենակ մնալու հնարավորության համար, բայց... Զարմանալի բան էր. իենց Մարտինը մեզ հետ չէր լինում, ես ինձ քաշված էի պահում, ուշքումհտքս Աննայից որեւէ բառ կորզելն էր, որն ավելի ջերմ լիներ, քան մեր ընկերական հաճոյախոսություններն էին, բայց չէի կարողանում խոսակցությունը շրջել ավելի մտերիմ հնչերանգների հում: Դրան հակառակ, երբ երեքով էինք, լեզուս բացվում էր. Մարտինի հեգնումներին, առանց որոնց նրա կյանքը կյանք չէր, պատասխանում էի կրկնակի սուր ծաղրով, գրուցն ուղղում դեպի ինձ համար շահեկան թեմաները, իսկ երբ խոսում էին ինձ քիչ ծանոթ նյութից, կարձ, բայց դիպուկ ռեպիկներով հաջողությամբ քողարկում էի անիրազեկությունս... Երբեմն կասկածում էի, որ մեր մեկուսի գրուցներում իմ կաշկանդվածությունն Աննայի կողմից էր կառավարվում այնքան մեծ էր իմ պահվածքների միջեւ տարբերությունը երկուսով կամ երեքով շփվելիս. նա ոչ ինձ, ոչ Մարտինին թույլ չէր տալիս ծավալվել իր հանդեպ մեր զգացմունքների շուրջ: Ինանալով հանդերձ, որ Աննան մենակ է՝ իր գեղեցկատես, բայց անհամ ընկերոջից բաժանվելուց հետո, ես ու Մարտինը ստիպված էինք նրա հանդեպ մեր սիրահարվածությունը միայն իրար հետ քննարկել: Դա ոչ մի բավարարություն չէր պատճառում մեզ՝ սրտներս բացելու առումով, քանի որ մրցակիցներ էինք եւ, բնականաբար, մեկմեկու չինք ցավակցում որեւէ Վրիպման առթիվ, ոչ էլ ուրախանում մեկս մյուսի հաջողությամբ՝ Աննայի կողմից ցուցաբերված առանձնահատուկ ուշադրության մեծ կամ փոքր (հիմնականում՝ աննշան) արտահայտություններով: Մինչ Աննայի հանդեպ իմ ու Մարտինի ընկերական համակրանքը համալսարանն ավարտելուց հետո անցած յոթ տարիների ընթացքում մեզ համար իսկ աննկատելի փոխվել էր սիրո, Աննան իմքը խուսափում էր մեկնումեկիս հետ առանձին հանդիպելուց՝ արձագանքելով հիմնականում միայն երեքով իրար գլուխ հավաքվելու հրավերներին: Ես ինչ-որ իմաստով նոյնիսկ պարտական պետք է լինեի Մարտինին, քանի որ Աննան հանդիպման հրավերն անվերապահորեն ընդունում էր բացառապես այն դեպքերում, երբ Մարտինը վերադարձած էր լինում իր հերթական արտասահմանյան գործուղումից ու մեզ իր տպավորություններն էր պատմում: Խոստովանեմ, որ որպես կանոն դրանք իրոք ուշագրավ էին, երբեմն՝ ուղղակի

զգայացունց, եւ միշտ ավելի հետաքրքիր, քան նրա հոդվածները, որ շատ շանցած լույս էին տեսնում թերթում: Կամ Մարտինն ավելի լավ պատմող էր, քան՝ գրող, կամ Աննայի ներկայությունն էր նրան այդպես ոգեշնչում:

Այնուհանդեռձ, երբ Մարտինը վերջապես հայտնվեց, իսկ նա հայտնվեց բարի բուն իմաստով՝ դժոխից չմտավ, որը մեր տեսադաշտում էր, այլ թիկունքներիս կողմից մոտեցավ ու նստեց ազատ աթուին (միզուցե հետնամուտքով էր ներս թափանցել, թեեւ դժվար էր պատկերացնել, թե ինչպես. այն գոնե մեր նստած տեղից չէր երեւում: Ես շատ ջերմեռանդորեն չսեղմեցի ձեռքը, որպեսզի ցույց տամ, որ դժողո՞ւ եմ, որ ինձ համար անփոխարինելի չեն իր պատմությունները: Վերջին հաշվով, այսօրվա աշխարհում ուզած երկրի մասին ուզած բան կարող ես իմանալ հեռուստատեսությունից: Տեսանյութեր հայթայթելն էլ բարդ բան չէ:

- Ո՞րն էր մեր թափառումների իմաստը, - հարցրեց Աննան՝ երեւի ցանկանալով կանխել իմ բողոքը, ենթադրելով, որ այն ավելի կոշտ է դրսեւորվելու: - Քեզ ի՞նչն էր ստիպում մեզ քաղաքի մի ծայրից մյուսը քշել: Սրճարանների իսկական անուններն էլ չէիր ասում, այլ նրանք, որ մեր երերիս կնքածն են: Մենք, իհարկե, գլխի ընկնում էինք, բայց, օրինակ, այս սրճարանի դեպքում մինչեւ վերջ վստահ չէինք, որ քեզ ճիշտ ենք հասկացել. այստեղ հազիվ մի երեք անգամ եղած լինենք:

Մարտինն անսովոր մռայլ էր, կարծես հակված էլ չէր երկար ու մանրամասն պատմել իր ուղեւորության մասին: Չնայած հովհայան տաք եղանակին, նա կոկորդը կապել էր, իսկ երբ խոսեց, ծայնը մրսածի էր:

- Արտաքող ձամփորդություն էր, - որոշ դադարից հետո դանդաղ արտաքերեց նա, - կարելի է ասել նաեւ՝ վտանգավոր:

Սրճարանի մեծ էկրանին ոստիկանական ալիքով կենդանի հետապնդում էին ցույց տալիս: Փախստականն ըստ երեւույթին անգիր գիտեր քաղաքը, քանի որ պարբերաբար հայտնվում էր գոտիններում, ուր տեսախցիկներ չկային, եւ դա անընդհատ մեծացնում էր իրադրության լարվածությունը: Ես ծեւացրի, թե տարված եմ փախած բանտարկյալի որսով, որից շեղվելն ինձ համար զոհողություն կլիներ: Մարտինը, առանց մեզ հարցնելու, գնաց եւ Աննայի համար սպիտակ գինի, ինձ՝ գարեջուր, իսկ իրեն վիսկի բերեց: Ես նկատեցի, որ թեթեւակի կաղում էր: Նա հյուրասիրելու թուլությամբ չէր տառապում, եւ ես, իր համար հավանաբար շատ ծանր բարեկամական այդ ժեստին ի պատասխան, արդարացրի իմ սառնությունը՝ մրթմրթալով, թե ամեն օր չէ, որ բանտից մարդ է փախչում, եւ դու կարող ես կենդանի երերում հետեւել, թե ինչպես են նրան որսում:

- Հայաստանում ամեն շաբաթ մեկը փախչում է բանտից:

- Որտեղ-որտե՞ղ... - հարցրի ես: Նա անտրամադիր շրջվեց դեպի ինձ ու տարակուսանքով սկսեց նայել աչքերիս: Ես բարձրացրի հոնքերս՝ երկրի անունն ինձ շատ բան չէր ասում:

- Հայաստանում-Հայաստանում, - ասաց նա: - Միայն թե ծեւ մի՛ թափիր, թե չես լսել այդ երկրի անունը: Ամերիկայում միլիոնավոր հայեր կան:

- Ասենք թե լսել եմ: Բայց դու էլ մի՛ ասա, թե այնտեղ ամեն շաբաթ բանտից մարդ է փախչում, - հեզմեցի ես: - Ամեն շաբաթ եւ ոչ ասենք թե տասը-տասնիհինգ օրը մեկ կամ շաբաթը երկու անգամ:

- Ամեն շաբաթ եւ շաբաթական մեկ հոգի,- կրկնեց նա հանգիստ:-  
Ավելի ստույգ եթե ասեմ՝ ամեն ուրբաթ օր, առավոտյան: Ընդ որում, միայն  
մայրաքաղաքի՝ Երեւանի որեւէ բանտից:

- Ինչո՞ւ՝ մայրաքաղաքի,- այս անգամ զարմանքը չզսպեց Աննան.  
Մարտինը թերեւս սկսել էր իր վարպետությունը ցուցադրել՝ այնպես  
պատմել, որ դու հարցերով անընդհատ բորբոքես խոսակցությունը,- եւ  
ինչո՞ւ անպայման՝ ուրբաթ. ոստիկանությունը շաբաթ-կիրակի չի՝  
աշխատում:

- Աշխատում է: Բայց փախուստներն ուրբաթ են կատարվում:  
Ոստիկանությունն ուղեկալներ է դուռը ու փակում քաղաքից դուրս եկող  
բոլոր ձանապարհները,- պատասխանեց Մարտինը:

Ու դադար տվեց՝ մեզ հրահրելով նոր ենթադրությունների:

- Դա հայերի հանգստի ծեւն է,- իմ գուշակությունն արեցի ես: - Հենց  
ուրբաթ օրը աշխատանքային չէ, եւ բոլորը հեռուստացույցների առաջ  
նստած նայում են, թե ինչպես են հանցագործին բռնում:

- Փախածին չեն բռնում, հաջորդ օրը նա ինքը ներկայանում է  
մեղայականով: Եւ քանի որ այդ երկրում գոշումը շատ բարձր է  
գնահատվում, շատ չանցած նրան բաց են թողնում ուղղակի դատարանի  
դահլիճից:

Ես աչքի պոչով հետեւում էի, թե ինչ վիճակում է ամերիկան  
բանտից փախած հանցագործը: Նա որոշ ժամանակ չքվել էր էկրանից:  
Հետո հաղորդավարը հայտնեց, որ հետապնդվողն այդ ընթացքում մի կին է  
բռնաբարել, մեկին սպանել է եւ կողոպտել երեք կրապակ: Ոստիկանական  
ուղղաթիրի տեսախցիկը նրան հայտնաբերեց ինչ-որ կիսաքանդ շենքի  
աստիճանահարթակում: Փախստականը, ակներեւաբար դա նկատելով իր  
մոտ եղած ինչ-որ մինի-հեռուստացույցի էկրանին, տեղից պոկվեց ու սկսեց  
աներեւակայելի արագությամբ վագել:

- Ել ինչո՞ւ են շուրջկալ կազմակերպում, եթե նա միեւնույն է  
հանձնվում է,- հարցրեց Աննան:

- Ես չասացի, որ շուրջկալ են կազմակերպում:

- Ասացիր, որ ձանապարհներն են փակում: Ինչո՞ւ:

Աննայի ծայնից զգացվեց, որ նյարդայնանում է:

- Այ, խնդիրը դա է: Տեղացիների մեծ մասը համոզված է, որ ամեն ինչ  
իշխանությունն է կազմակերպում, որպեսզի քիչ մարդ գնա ընդդիմության  
հանրահավաքներին: Դրանք էլ սովորաբար ուրբաթ օրերին են տեղի  
ունենում:

- Մարտին, սպասիր,- աջ ձեռքը վճռականորեն վեր բարձրացրեց  
Աննան,- ես էլի տրամաբանություն չեն տեսնում: Եթե, ըստ քո  
նկարագրածի, փակում են քաղաքից դուրս եկող ձանապարհները, դա  
ինչո՞վ է խանգարում հանրահավաքին:

- Հանրահավաքները տեղի են ունենում քաղաքից դուրս: Արդեն մի  
քանի տարի է, ինչ Հայաստանի խորհրդարանն օրենք է ընդունել, որ  
ցուցերը, հանրահավաքները, երթերը պետք է տեղի ունենան խոշոր  
բնակավայրերից առնվազն Երեսունինգ կիլոմետր հեռու, որպեսզի  
չխոչընդոտեն Երթեւեկությանը, մշակութային միջոցառումներին, մարդկանց  
հանգիստը չխանգարեն: Երկիրը փոքր է, ընդդիմությունն ընդամենը  
այդպիսի մեկ-երկու տեղ է գտել, բայց նույնիսկ այդտեղ նրա

կողմնակիցների մեծամասնությունը չի կարողանում հասնել, քանի որ ձանապարհներն ուրբաթ առավտովանից փակվում են:

- Իսկ ո՞րն է ընդդիմության պահանջը, որ իշխանությանն այդքան սարսափեցնում է,- հարցրեց Աննան:

- Նրանք պահանջում են չեղյալ հայտարարել 2003 թվականի նախագահական ընտրությունների արդյունքները:

Ես շվարած տարածեցի ձեռքերս.

- Հիմա 2024 թվականն է, Մարտին... Այդ ցնդաբանությունները պատմելու համար է, որ ինձ կտրեցիր կարեւոր ֆուտբոլը նայելուց, ինչն ինձ համար, որպես մարզական մեկնաբանի, գիտես, միայն հաճույք չէ, այլ նաեւ՝ պարտականություն:

- Լավ, իետո կպատվիրես խաղը եւ կնայես,- ինձ մխիթարեց Աննան:

Մարտինն անտեսեց իմ «ցնդաբանություն» որակումը:

- 2003 թվականից ի վեր ընդդիմությանը չի հաջողվել մասնակցել որեւէ ընտրության,- իրեն ոչ հատուկ համբերատարությամբ պարզաբանեց նա,- նրանց թեկնածուներին չեն գրանցել:

- Որքան էլ որ չի հաջողվել... բայց երեւի բոլոր հեռուստատեսությունները անմիջապես հաղորդում են հանրահավաքը խոչընդոտելու մասին, ժողովուրդը տեղեկանում է եւ... իշխանությունների դեմ զայրանում ավելի, քան եթե անարգել կարողանային հանրահավաքի գնալ երեսունիհնգ կիլոմետր հեռու,- փորձեցի անծանոթ երկրի իշխանությունների Վարքագիծը հասկանալ ես:

- Հեռուստատեսություններն այդ մասին չեն հայտնում: Իրենց մեկնաբանություններում նրանք արդարացված են համարում ցանկացած քայլ, որն ուղղված է հասարակությանը սպառնացող այնպիսի վտանգի դեմ, ինչպիսին ազատության մեջ գտնվող փախստական բանտարկյան է...

- Եւ մարդկանց մնում է բավարարվել միայն լուրերով հաղորդվող համառոտ տեղեկատվությամբ...,- Մարտինի միտքը շարունակեց Աննան:

Չէ, երեւում է դեռ չպատկերացրիք երկրի առանձնահատկությունը... Հեռուստատեսություններից մեկը փախուստի լուրն առնելուն պես, սկսում է դասական երաժշտություն հաղորդել՝ առհասարակ ծրագրից հանելով լուրերի թողարկումները: Մեկ ուրիշն այդ օրը նվիրում է հայրենական արտադրությանը. ցույց է տալիս, թե ինչպես են թութուն ցանում, թե ինչպես է ածում թութունը, թե ինչպես են թութունը հավաքում, մշակում, ինչպես են գլանակների մեջ լցնում... կամ էլ շոկոլադ են ցուցադրում երեխաններին: Որոշ հեռուստատեսություններ էլ այդ առթիվ շատացնում են իրենց կողմից վաճառվող ավտոմեքենաների քանակը, ընդ որում, դրանք ներկայացվում են հատիկ-հատիկ եւ, որպես հին ժողովրդի զավակներ, միայն հնացած ավտոներ են վաճառում: Ալիքների մի մասն ավելացնում է լոտոների խաղարկության ժամերը՝ տակաթիկները դանդաղ-դանդաղ են հանում տոպրակից, տների վաճառքի հայտարարություններն է կրկնապատկում... Որոշներն էլ պարզապես պրոֆիլակտիկա են հայտարարում: Եթե չգիտեք, թե դա ինչ է, ասեմ, որ այն է, եթե ոչ մի հաղորդում չկա, էկրանին միայն ուղղահայաց գունավոր գժեր են:

- Հանրային հեռուստատեսությունը եւ մի երկու այլ ալիք, որ այդ օրը շարունակում են իրենց հաղորդումները, հանրահավաքի մասին չեն

խոսում, բայց մտավորականների խմբակային ելույթներ են ցուցադրում ընդդիմության դեմ:

- Իսկ ինչո՞ւ են նրանք ելույթ ունենում ընդդիմության դեմ:
- Որովհետեւ դա միակ առիթն է, երբ նրանց մտավորական են

կոչում:

- Իսկ ինչն էր քեզ՝ դատական լրագրողիդ, տարել այդ երկիրը...

Հայաստան,- հարցողի ես:

- Դա շատ լավ հարց է, - դեմքի թթված արտահայտությունը բացելու փորձ արեց Մարտինը՝ հիշելով մեր ուսանողական սիրած կատակներից մեկը:

Նյու Յորքի համալսարանի լրագրության բաժնում սովորելիս մենք այդպես էինք մեկս մյուսին տված տափակ հարցերը ծաղրում՝ նմանակելով քաղաքական գործիչներին, որոնց երեակայությունը չէր հերիքում իրենցից հարցագրուց վերցնող լրագրողներին սիրաշահելու ուրիշ եղանակ գտնել:

- Այնուհանդեմ, - պնդեցի ես, քանի որ իմ հարցը տափակ չէր, ավելին՝ շատ բնական էր տվյալ պահին:

- Ես ասացի, չէ՞ որ զոջումը շատ բարձր է գնահատվում: Տաք տարի անընդմեջ Հայաստանում չի եղել որեւէ հանցագործ, որը դատարանում չզգաւ իր գործած մեղքի համար: Ես, ի թիվս այլ արտասահմանյան լրագրողների, իրավագետների, դատավորների, հրավիրված էի այդ հոբելյանին: Մեկշաբաթյա ծրագիր էր: Բազմաթիվ դատավարությունների ներկա եղանք, որոնք նշանակված էին օրվա տարբեր ժամերի, որպեսզի հասցնենք շատ դատարաններ այցելել: Ամենատարբեր գործեր էին լսվում՝ մարդասպանությունից մինչեւ սովորական գողություն: Դատավորներն ամեն անգամ հայտարարում էին, որ դատը բաց է, տեղի է ունենում արտասահմանյան լրագրողների ներկայությամբ... Ամխստիր բոլոր հանցագործներն էլ զոջացին... Բայց պետք է ծեզ ասեմ, որ շատ ճնշող տպավորություն էին թողնում այդ խոստովանությունները: Մարդիկ կարծես անգիր արած բառեր էին արտասանում: Սարսափելի ծանր էր տեսնել, թե ինչպես աչքերի նույն անտարբեր արտահայտությամբ այլեւայլ (զանազան) ծանրության մեղքերի համար ներում էին խնդրում ջահել ու ծեր, կին ու տղամարդ: Ես այդ օրերին հասկացա, թե ինչքան կարեւոր է, որ մարդը հասունանա զոյման համար, այն համակի նրա ամբողջ հոգին...

Մարտինը լրեց: Ապա սկսեց գլուխը տարութերել՝ կարծես ծանրութեթեւ անելով, թե որքանով էր համոզիչ իր եզրահանգումը:

Ես վեր կացա, մոտեցա բարին ու երեքիս համար էլ խմիչք վերցրի: Իսկապես կուգենայի այս պահին որեւէ ֆուտբոլ դիտել իմ սիրած ծեւով՝ լավագույն խաղացողներից մեկի աչքերով, այսինքն՝ տեսախցիկից, որ ամրացված է նրա գլխակապին: Երբ վերադարձա, Աննան ու Մարտինը նոյն դիրքերով նստած էին՝ կարծես գնալուց առաջ հիպնոսացրած լինեի նրանց: Իմ վերադարձը նրանց հիպնոսից չհանեց:

- Եթե քեզ համար այդքան ծանր է, արի ուրիշ բանից խոսենք, Մարտին, առաջարկեցի ես: - Ինչո՞ւ էիր մեզ սրճարանները փոխել տալիս:

Նա թոթվեց ուսերը.

- Դա շատ լավ հարց է՝ ուղղակիորեն կապված է իմ ուղեւորության հետ... Ես վախենում եմ, Պոլ: Մի քանի օր է, որ վերադարձել եմ Նյու Յորք, բայց տպավորություն ունեմ, թե ինձ հետեւում են:

Ես ու Աննան իրար նայեցինք: Նա չէր կատակում:

- Անկեղծ ասած, սա իրոք ավելի շուտ զգացողություն է: Այն, ինչ նկատել եմ, կարող է պատահականություն թվական ձեզ. Բրոդվեյով մի հոգի երկար քայլել է իմ հետեւից: Մեկ ուրիշը մետրոյի նույն կանգառում նստել է գնացք, նույնում, ինչ ես, դուրս եկել... Ճիշտ է, բոլոր այդ դեպքերում նրանք, չասեմ՝ հայ էին, բայց արեւելյան արտաքին ունեին:

- Իսկ՝ ինչո՞ւ: Ի՞նչ ես արել, ի՞նչ հետաքրքրություն ես ներկայացնում քեզ հետապնդողների համար:

- Ես իմացա, թե ինչպես են կորզում այդ խոստովանությունները, ո՞րն է մեղադրյալների, ինչպես այնտեղ են կոչում, «գործուն զղման» գաղտնիքը: Ես պարզեցի դա պատահաբար...

## 2.

- Զղջումը կորզել մի հոգուց, երկուսից, բայց բոլոր մեղադրյալներից եւ տարիներ շարունակ՝ ես դրան չեմ հավատում,- ասացի ես:

Սարտինն ինձ նայեց՝ ինչպես մի երեխայի, որը դեռ հավատում է, որ Սանտա Կլաուսն իսկապես ամեն տարի գալիս է Լավլանդիայից:

- Ես էլ չի հավատում, մինչեւ որ ինքս համոզվեցի:

- Հուսով եմ, քեզ էլ չեն դատել, ու դու գոջացել ես,- կատակեց Աննան:

- Այդ մեկը՝ չէ,- պատասխանեց Սարտինը:

- Այդ դեպքում՝ ինչպէ՞ս:

- Ամեն ինչ սկսվեց նրանից, որ դատավարություններում տարօրինակ բաներ նկատեցի, որոնց մեծ նշանակություն չտվեցի այն ժամանակ: Օրինակ, պետական մեղադրողը պահանջեց տասնինգ տարի տալ մի ցուցարարի, որը լրագրով խփել էր մի ոստիկանի գլխին: Ճիշտ է, ցուցարարին մեկուկես տարի տվեցին՝ «գործուն զղման» արդյունքում... Իսկ այ, մի երիտասարդի, որը «Սարտեր առանց օրենքների» մարզածելի մասնակցի տեսք ուներ եւ ընդդիմադիր թերթի լրագրողի էր ծեծել, պատմեցին պետական մեղադրողի պահանջածի կրկնակի չափով, որը կազմեց... երկու հարյուր դոլարի կարգի տուգանք: Նա էլ զոյաց, բայց այդպես էլ չբացատրեց, թե ինչ ուներ լրագրողի դեմ, ընդհանրապես դժվարությամբ էր մտքերը ծեւակերպում... Մի դեպք էլ կար, որը ես կկոչեի զվարճալի, բայց քանի որ ամոր է մարդկանց դժբախտության վրա ծիծաղելը, անվանեմ՝ արտառոց: Ինչ-որ մեկը, ներկայանալով որպես սիյուռքահայ բարերար Զորջ, զյուլերից մեկում սկսում է ցուցակագրել մարդկանց, որոնց մտադիր է օգնություն տրամադրել: Մի քանի օր այդտեղ անցկացնելուց հետո հայտնում է իրեն հյուրընկալած կնոջը, թե շտապ պետք է ուրիշ մարզ մեկնի եւ ծրարով նրան պահ է տալիս ութ հազար դոլար՝ ապահովության համար դիմացք վերցնելով մի հին ոսկե խաչ, գործ եւ այլն: Երբ որ բավական ժամանակ է անցնում, եւ նա չի վերադառնում, կինը բացում է ծրարն ու մեջը գրություն գտնում՝ «Տեսա՞ր, թե ինչ եղավ»... Դատի ընթացքում ուրիշ տարօրինակ բան էլ կատարվեց: Գյուղացի կինը,

որից խաբեռությամբ գողացել էին խաչը, մեղադրյալի զղջման պահին սկսեց բղավել, որ հանցագործը նա չէ, որ սա ըստ Երեւույթին իրենց գյուղի տեղն է չգիտի, որ իրեն բոլորովին ուրիշ իրեր են Վերադարձրել եւ այլն: Բայց դա մեղադրյալի վրա չազդեց, նա շարունակեց զղալ ու ներողամտություն հայցել...

Ես Ենթադրեցի, որ ոստիկանությունում այնպես են Ճնշում կասկածյալներին, որ նրանք զղջում են նույնիսկ այն հանցանքի համար, որից տուժածը տվյալ մարդուն չի ճանաչում որպես մեղադրյալ: Քանի որ Հայաստանում գտնվելու երրորդ օրը, ըստ ծրագրի, պետք է ոստիկանության գործունեությանը ծանոթանայինք, որոշեցի նախօրոք հարցեր չտալ, այլ հաճբերել, մինչեւինք կիանդիպեն ոստիկանների հետ: Ինչ որ մեզ այդ օրը ցույց տվեցին, ինձ ստիպեց մտածել, որ մեղք եմ առել հոգուս վրա: Մենք ականատես եղանք մի շարք մարզումների, որ ոստիկաններն անցկացնում են, որպեսզի կարողանան հասարակական կարգը հաջողությամբ պահպանել: Ամենակարեւոր վարժությունը, որին նրանք պետք է տիրապետեին, ականջները կայծակնային արագությամբ փակելն էր: Բանն այն է, որ այնտեղ ոստիկանները շատ անաչկոտ են, սխալ չէր լինի ասել՝ նուրբ: Նրանք պետք է հասցնեն ականջները փակել, եթե փողոցում կամ հատկապես հանրահավաքի մասնակցի ձերբակալելիս իրենց հասցեին զարդարութեն: Հակառակ դեպքում նրանք իրենց կողցնում են դրանից, շփոթահար լինում, երբեմն ամեն ինչ թողնում, վազում են տուն՝ ծնողներին բողոքելու եւ հարցնելու, թե ինչ է նշանակում այս կամ այն հայիշյանքը... Եւ առհասարակ՝ ինչպես են իրենք ծնվել, մարդն ինչպես է բազմանում... Ճի՞շտ է, որ...

Ընդհանուր առնամբ, նրանք բավականին խոցելի են, որովհետեւ թոյլ տեղները գլուխն է: Հերիք է նոյնիսկ մի թերեւ հարված, եւ դա կարող է նրանց համար կործանարար հետեւանքներ ունենալ: «Ահա թե ինչու, այն չարամիտ հանցագործին, որ զազրախոսում է կամ հարվածում ոստիկանի գլխին, օրենքը պատժում է ամբողջ խստությամբ», - բացատրեց մեզ ոստիկանապետը: Հենց այդ պատճառով էր ազատազրկվել ոստիկանի գլխին թերթով, այն էլ, ինչպես պարզել էր քննությունը, ընդդիմադիր թերթով խփած ցուցարարը: Իսկ ոստիկանները հատուկ դասընթացներ են անցնում, որ սովորեն՝ ինչպես պահել իրենց գլուխը, իհարկե, նաեւ՝ վերադասների գլուխը: Պարապմունքներում զգալի ուշադրություն է դարձվում նաեւ կանանցից, երեխաններից ու ծերունիներից պաշտպանվելուն, որոնք համարվում են անկանխատեսելի: Այլ է վիճակը քրեական հանցագործների պարագայում՝ սրանց հետ բախումներ համարյա չեն լինում. նախ, նրանք կարող են զինված լինել, երկրորդ՝ ոստիկանը նրանցից յուրաքանչյուրի մեջ տեսնում է խորհրդարանի ապագա պատգամավորի:

- Ի՞նչ խորհրդարան, - հարցրեց Աննան:

- Երկրի: Հայաստանում խորհրդարանի անդամ կարող է դառնալ միայն այն անձը, ով դատվածություն ունի... Մի զարմացեք, ահա թե ինչ է այնտեղ կատարվել: Անկախություն ծեռք բերելուց ի վեր, գնալով ավելի շատ են պատգամավոր դարձել մարդիկ, ովքեր շատ փող ունեն: Բայց պատգամավորի վկայականը ծեռք բերելով՝ նրանք զբաղվել են միայն իրենց բիզնեսի համար լրացուցիչ արտոնություններ ապահովելով եւ

հազվադեպ են մասնակցել նիստերին, անձեռնմխելի լինելով՝ ուշադրություն չեն դարձրել նույնիսկ իշխանության հորդորներին: Ավելի ու ավելի դժվար է դարձել Ազգային ժողովում քվորում ապահովելը... իսկ երբ դատվածություն ունենալու ցենզ է մտցվել, վիճակն արմատապես փոխվել է: Տրամաբանությունը պարզ է. ազատազրկված մարդը փորձով ապացուցել է նստելու իր կարողությունը, ինչը երաշխիք է, որ նա Ազգային ժողովի դահլիճում էլ կնստի եւ անհրաժեշտ պահին կը վեարլի: Բացի այդ, դատվածությունը կյանքի փորձ է: Իսկ այն, որ տվյալ պահին մարդն ազատության մեջ է, նշանակում է, նա ուղղվել է: Հայերի հոգեւոր առաջնորդը, որին նրանք «կաթոլիկ» են կոչում, թեև իրենք քրիստոնեական այլ եկեղեցու են պատկանում, այս նորանուծությունն արդարացրել է՝ «մոլորյալ որդու» օրինակը բերելով... Այդպիսի պատգամավորներն ուրիշ առավելություն էլ ունեն. Եթե քաղաքական կուսակցություններն ամիսներ շարունակ կարող են բանավիճել որեւէ հարցի շուրջ եւ արդյունքի չհանգել, ապա քրեական հեղինակությունները շատ կարծ ժամկետում, հաշված ժամերի ընթացքում կարող են որոշել «Ճիշտն» ու «Սխալն» ու իրար մեջ բաշխել պաշտոնները: Կան նաև բաներ, որ մեր կոնգրեսականներին ու սենատորներին ոչ թե հետաքրքիր կլինի, այլ արժե, որ ուղղակիորեն հայ պատգամավորներից ընդօրինակեն: Զերմ դիմելածեւերը: Նրանց իրար ողջունում են ինչպես եղբայրը՝ եղբորը: Ես ստվորեցի այդ մի քանի բառը հայերեն. «Բարեւ, ախպեր» կամ «Բարեւ, իմ լավ ախպեր»: Եւ դա միայն խորհրդարանով չի սահմանափակվում, այդպես են իրար դիմում տղամարդկանց, տղաների մեծ մասը:

Ընդհանրապես շատ մեծ է համարվում օրենսդիրների վաստակը երկրում կայունություն ապահովելու գործում: Նրանց ջանքերով է, որ Հայաստանի օրենսդրությունը ոչ թե առաջվան նման կապկում է արեւմտյաններին, այլ համապատասխանում է տեղական առանձնահատկություններին ու ազգային մտածողությանը: Ըստ Սահմանադրության, Հայաստանի Նախագահն ինքն է որոշում, թե քանի անգամ կարող է առաջարկել այդ պաշտոնի համար՝ խորհրդակցելով իր քարտուղարուհու հետ: Այդ հոդվածն ընդունելուց ի վեր երկիրն այլեւս եվրոպական, միջազգային կառույցների անդամ չէ, բայց հայերից շատերն ինձ ասացին, որ դա իրենց չի վշտացնում, քանի որ այդպիսով կանխվել է հոնոսեքսուալիզմի տարածումը: Ըստ երեւութին, վտանգն իսկապես շատ լուրջ է եղել. հայերից ով ինձ հետ ինինգ րոպեցից ավելի էր խոսում կամ առավել եւս՝ մի բաժակ խմում էր, շուրջը գտնվողների մասին ասում էր. «Այ, սրանց տեսնո՞ւմ ես, մեր կողքիններին, սրանք բոլորն արվածոլ են»: Նրանք հոմոսեքսուալիստներին կոչելու համար հայերեն ինչ-որ բառ էին օգտագործում, որը հնչողությամբ գերմանացի մեծ գրողներից մեկի ազգանունն էր հիշեցնում՝ Հայնե՝, Շիլլե՝, Հյոլդերլին... միտքս չի գալիս:

Հայաստանում մահապատիժ չկա, վերացված է դեռ այն ժամանակներից, երբ երկիրը Եվրախորհրդի անդամ է եղել: Արտասահմանցի հյուրերից ոմանք տարակուսում էին, որ Եվրախորհրդի պահանջով ընդունված այդ կետը դեռ չեն հանել, ինչին տանտերերը բավական փիլիսոփայական պատասխան տվեցին. «Չէ՝ որ մարդը մահկանացու է, առանց այդ էլ նա բանտում կարող է մահանալ էլեկտրահարվելուց, կարող է կախվել, իիվանդանալ ու վիրահատությանը

չդիմանալ եւ այլն: Ընդհանուր առմամբ հայերն ինձ վրա նախապաշարված մարդկանց տպավորություն թողեցին: Եթի ես մի սոցիոլոգի հարցրի, թե մարդիկ այստեղ ինչքան են ապրում, նա չորս կողմը նայեց, ինչն անում էր ամեն անգամ ինձ պատասխանելիս, եւ ասաց՝ մինչեւ Կկուն կանչի: Հետո ճշտեց, թե՝ նա, ով չի գնում ջազ լսելու, մեռնում է, երբ Աստված կամենա, ով գնում է՝ մինչեւ Կկուն կանչի: Ճշտումն, ինքներդ եք հասկանում, որեւէ պարզություն չմտցրեց իմ պատկերացումների մեջ, ընդհակառակը, ավելի խճճվեցի, որովհետեւ մինչ այդ պահի գաղափար իսկ չունեի, որ հայերը կապ ունեն ջազի հետ:

Սահմանադրության մեջ մի համեմատաբար նոր կետ էլ կա՝ ընդունել են մոտ քսան տարի առաջ, որն արդեն իսկ հնացել է, բայց փոփոխության չի ենթարկվել: Վարչապետ նշանակվում է այնպիսի մեկը, ով հանուն երկրի ներքաղաքական կայունության՝ իր կուսակցության հետ միասին լքում է ընդդիմությանը եւ անցնում Նախագահի կողմը: Քանի որ երկար ժամանակ է, ինչ իսկական ընդդիմություն չկա, որին կարելի լինի վճռորոշ պահին լքել (Վարչակարգը չսիրողները դա կոչում էին՝ դավաճանել), անընդհատ փորձեր են արվում կեղծ ընդդիմություն ստեղծել: Մեկը Մոսկվայից է գալիս, մյուսը՝ Վաշինգտոնից, երրորդն ասում է՝ ես իին երեւանցի եմ: Եւ ահա Նախագահն արդեն որերորդ անգամ ստիպված է լինում կեղծ ընդդիմությունից վարչապետ նշանակել:

Չնայած Հայաստանը նախկին խորհրդային հանրապետություն է, իշխող կուսակցությունները շուկայական հարաբերությունների մոլի ջատագովներ են: Այդ նվիրվածության պատճառով նրանք անընդհատ բուռն, անզիջում վեճերի մեջ են իրար հետ, թե Երեւանի որ շուկան որ կուսակցությանը պետք է պատկանի:

Երկրի ապագայով մտահոգված՝ Երեխաներին քաղաքական կյանքի մեջ ներգրավելու եւ արտագաղթելու տրամադրություններին հակազդելու համար օրենք է ընդունված, որ տասնինգ տարին լրացած ամեն ոք կարող է բարձր պետական պաշտոն զբաղեցնել: Այդ օրենսդրական նորմով ոգեւորված՝ մի խումբ Երեխաներ, որ հիմնականում պաշտոնյաների զավակներ են, ստեղծել են «Ճուռակներ» կոչվող կազմակերպությունը, որը խոստանում է իշխանության գալու դեպքում հետ վերադարձնել սովետական խնայորամարդներում փոշիացած ավանդները... Նրանք արդեն բավական մեծ համակրանք են վայելում այդ տարիներին նշանակալի գումարներ կողցրած բնակչության մեջ:

Այս ամենը մեզ բացատրեցին Ազգային Ժողովում, որից հետո հրավիրեցին հերթական ճաշկերույթին: Ահա այնտեղ էր, որ տեղացիներից մեկը, որ նստած էր իմ դիմաց, իմանալով, որ «Նյու Յորք թայմսից» եմ, հարցրեց, թե արդյոք եկել եմ Զորջի՞ն փոխարինելու: Հերքեցի ենթադրությունը՝ ասելով, որ գաղափար իսկ չեմ ունեցել, որ «Նյու Յորք թայմսը» թղթակից ունի Հայաստանում: Զրուցակիս շուտով մի կողմ կանչեցին, եւ նա այլեւս չվերադարձավ: Եթի ուշ Երեկոյան գանգեցի Նյու Յորք, խնբագիրս ինձանից պակաս չզարմացավ. «Ես ոչ մի Զորջի չեմ ճանաչում»:

Հաջորդ օրը սկսեցի հարցուփորձ անել, թե ո՞վ է Զորջը՝ «Նյու Յորք թայմսից»: Որեւէ մեկը նրան չձանաչեց: Հակառակի պես, չէի հիշում այն մարդու անունը, ումից լսել էի Զորջի մասին: Մեր ծրագրի հինգերորդ օրն էր, ցերեկը նախատեսված էր այցելություն մի քանի հին տաճարներ, որոնք շատ գեղեցիկ էին, երեկոյան՝ միջազգային մարզական համդիպման էինք: Ի դեպ, Պոլ, ֆուտբոլի:

Իմ գլուխը սկսել էր ցավել քաղաքականությունից, այնպես որ ուրախացա, որ սպորտի մասին էինք խոսելու:

- Ո՞ւմ հետ էին հանդիպում հայերը, Մարտին:

- Հայեր չկային: Ոուսներն ու ամերիկացիներն էին խաղում իրար հետ:

- Այ-այ-այ, հիմա արդեն հորինեցիր,- մատը Մարտինի վրա թափ տվեց Աննան:

- Չէ, Աննա, չկարողացար բռնեցնել:

- Այդ դեպքում ի՞նչ են անում ռուսներն ու ամերիկացիները

Հայաստանում:

- Ոուսները վաղուց են այնտեղ՝ երկու հարյուր տարի է: Սովետական Միության փլուզումից հետո նրանք պահպանել են Հայաստանի իրենց ռազմաքաջաները: Վերջին երկու տասնամյակի ընթացքում այլ նախկին սովետական հանրապետությունները պահանջել են իրենց տարածքից հանել ռուսական զորքերը, եւ Մոսկվան դրանք էլ է տեղափոխել Հայաստան: Իսկ մերոնք այնտեղ կառուցել են աշխարհում ամենամեծ դեսպանատունը, եւ հիմա, վհաստորեն, երկրի մայրաքաղաք Երևանը տարածվում է ԱՄՆ-ի դեսպանատան շուրջը: Նրա պարիսպներն այնքան բարձր են, որ հնարավոր չէ ներսից որեւէ բան տեսնել, բայց որոշ բաներ երբեմն դեսպանը լսում է... Ոուսական բազաների ու ամերիկյան դեսպանատան միջեւ գտվող ազատ մնացած տարածքներում հայկական բանակն է տեղավորված: Հայերն այն ամենամեծն են համարում տարածաշրջանում, քանի որ իշխող կուսակցություններից մեկը գինվոր է հանարում դպրոցական բոլոր երեխաներին, որոնց կոչում է «սվին»: Նրանք այդ երեխաներով սպառնում են հարեւան թուրքիային, որը շատ հայ երեխաների է կոտորել անցած դարում: Բայց տերմինի հմաստն ինձ համար մութ մնաց, քանի որ սվինամարտը, գիտեք, վաղուց պատմության գիրկն է անցել...

Ես աղոտ հույս ունեի, որ Զորջը նույնպես, որպես ամերիկացի, մարզադաշտում կլինի, եւ նրա հետ կծանոթանամ: Բայց, պարզվեց, մարզադաշտը լեփ-լեցուն է, եւ բազմության մեջ ամերիկացու չէ, այլ լորակայինին էլ չէիր տարբերի: Ի դեպ, հայերն իրենց ուրույն եղանակն ունեն մարդկանց տներից դուրս հրապուրելու՝ այնպիսի մարզական մեկնաբաններ են պահում հեռուստատեսություններում, նրանք այնքան զարիկուրելի են վարում ռեպորտաժները, որ մարզասերներին փրկվելու մի եղանակ է մնում՝ գնալ մարզադաշտ: Լավ է, ամերիկացիներն այդ մեթոդից անտեղյակ են, թե չէ դու գործազուրկ կմնայիր, Պոլ:

Մարտինի վերջին արտահայտությունն անախորժ հնչեց ականջիս, բայց որ կողմից էլ նայեցի՝ հաճոյախոսություն էր: Ես խաղը մինչեւ վերջ չնայեցի, թեև բավականին հետաքրքիր էր. ամերիկացիները խաղում էին ամերիկյան ֆուտբոլ, իսկ ռուսները՝ ռուսական... Այսինքն՝ Եվրոպական,-

նկատելով մասնագետի իմ տարակուսանքը՝ ուղղեց իրեն նա: - Որոշեցի դուրս գալ մարզադաշտից ու մի քիչ մենակ թափառել՝ մինչ այդ ամեն տեղ խմբով էինք գնացել: Թարգմանիչս ասաց, որ ինձ կուղեկցի: Ես ուղղակիորեն հայտարարեցի, որ ուզում եմ սովորական, ոչ պաշտոնյա հայերի հետ շփվել, ուզում եմ առանց իրեն զբոսնել քաղաքում: Նա պատասխանեց, թե չի կարելի այդ բանն անել՝ իմ անվտանգության նկատառումներից ելնելով: Ըստ նրա, որպես արտասահմանցու ինձ ոչինչ չի սպառնում, բայց քանի որ նաեւ լրագրող եմ, կարող եմ անսպասելի հարձակման ենթարկվել: Որպես հիմնավորում նա վկայակոչեց փաստը, որ շատ լրագրողներ, որոնք սուր հոդվածներ են գրում, պետք է առավոտյան ու երեկոյան ներկայանան ոստիկանություն, որպեսզի վերջինս հավաստիանա, որ ողջ ու առողջ են, հետները որեւէ փորձանք չի պատահել:

- Հայաստանում կենսամակարդակը, ցավոք սրտի, դեռ ցածր է, փոքր են նաեւ տուգանքները, - ասաց նա: - Դա պատճառ է դառնում, որ ամբողջ տարածաշրջանից, երբեմն ավելի հեռվից էլ՝ Բոլիվիայից, Ռուսանդայից, Գարունից մեր երկիրը լրագրող ծեծելու զան մարդիկ, որոնց դառնացրել են տեղի զանգվածային լրատվամիջոցները: Նրանք բոլորն էլ զանում են լրագրողի գլխին խփել, որը նրա ուժեղ տեղն է, ինչի շնորհիվ տուգանքը չի գերազանցում երկու հարյուր դոլարը... Հիմնականում ընդդիմադիր լրագրողներն են ծեծվում, որոնք միշտ ոտքի տակ են ընկնում, ամեն տեղ խորում են քթները: Ընդ որում, հասուկ թերթեր կան, որոնք կարդալով՝ գրոսաշրջիկը կարելի է ինանալ, թե որ լրագրողներն են, որ թարմ են՝ վաղուց չեն ծեծվել... Ճիշտ է, իշխանամետ լրատվամիջոցների աշխատակիցներին էլ են ծեծում (ըստ հայկական նորագույն ասացվածի՝ ինչ լրագրողի էլ ուզե՞ կարելի է ծեծել, մի բան արած կինի), բայց այդ մեկը շատ հազվադեպ է պատահում: Մի քանի անգամ քննարկվել է տուգանքները բարձրացնելու հարցը, բայց կառավարությունն իր տագնապն է հայտնել, որ դա կնվազեցնի արտասահմանյան գրոսաշրջիկների հոսքը, որ պետական բյուջեի համարման կարեւոր աղբյուրներից է... Վատն այն է, իհարկե, որ ընդդիմադիր լրագրողները շատ քիչ են՝ երկու ծեռքի մատների վրա կարող են հաշվել: Դա դժվարացնում է նրանց որսը»:

Թարգմանիչս կարող էր մինչեւ գիշեր շարունակել իր փաստարկումները: Ասացի, որ զուգարան են ուզում գնալ: Առաջարկեց ուղեկցել ինձ, բայց ես հրաժարվեցի՝ պատճառաբանելով, թե վաղուց է, ինչ ինքնուրույն եմ գլուխ հանում այդ գործերից... Բայց զուգարանից չհաջողվեց աննկատ սպրել դուրս: Նա մուտքի մոտ զգաստ կանգնած էր. ինքն էլ էր ուզեցել միզել, դրա համար հետեւել էր ինձ:

Ես դուրս եկա մարզադաշտից, նա լուր ինձ ուղեկցեց: Հենց մարզադաշտի հարեւանությամբ տոնավաճառ կար: Ընդհանրապես հայերը տոներ շատ չունեն, բայց տոնավաճառներ՝ ինչքան ասես: Ես թարգմանչիս ասացի, որ ուզում եմ գնումներ անել: Միտքս այն էր, որ ամբոխի մեջ կարողանամ պոկվել նրանից: Առաջին տոնավաճառում դա չհաջողվեց, երկրորդում՝ նույնպես, եւ միայն երրորդում, որը պարսիկ մեծ բանաստեղծ Ֆիրդուսու անունն էր կրում, նրան կորցրի այն բանի շնորհիվ, որ նկատեցի, թե ինչպես է կարողանում իմ հետքի վրա ընկնել: Նա՝ ինձանից տասնհինգ-

քսան տարի մեծ, հիսունին մոտ, միջահասակից ցածր մի տղամարդ, պազում ու նայում էր անցուդարձողների ուժերին: Ինձ մատնում էր շորտս. հայերը, չնայած ամառվա ուժեղ շոգին, միայն երկար շալվարներով են ման գալիս: Ես այդ «Ֆիրդուսնոցում» ինձ համար մի երկար սեւ շալվար գնեցի, եւ նա զրկվեց հետապնդան իր մեթոդ կիրառելու հնարավորությունից:

- Իսկ ահա ամերիկյան մյուս փախստականին բռնեցին,- ասացի ես՝ զլսով ցուց տալով հեռուստացուցի էկրանը, որտեղ ոստիկանությունը շրջապատել էր անհաջողակ բանտարկյալին:

- Ինձ էլ բռնեցին,- հոգոց հանեց Մարտինը: - Հազիվ էի դուրս եկել տոնավաճառի հակառակ ծայրից, երբ դիմաց ծլեց մեկ ուրիշ թարգմանիչ: «Հրաշք է, որ ձեզ գտա,- ասաց նա: Այսօրվա ձեր ծրագրում նախատեսել ենք հյուրընկալություն մի սովորական հայկական ընտանիքում: Նրանք արդեն սպասում են ձեզ եւ իսաւ կվիրավորվեն, եթե չընդունեք հրավերը»: Այլ ելք չկար: Մենք ուղեւորվեցինք դեպի մոտակայքում սպասող ավտոմեքենան, որի մեջ արդեն նստած էր իմ թարգմանիչը: Տասը րոպէ անց կանգ առանք մի բարձրահարկ շենքի մոտ: Ոտքով բարձրացանք երեք հարկ: Մուտքը բավական մաքուր էր, ավելի, քան` փողոցները: Ընտանիքը՝ տատ-պապ, ամուսին-կին, մեկ որդի-մեկ դուստր, բավականին հաճելի տապավորություն թողեց ինձ վրա: Չարմանալի էր միայն, որ հայոց մի երկու անգամ խաւոնեց տղայի անունը, եւ սա ուղղեց նրան: Ճիշտ է, միզուցե նրանք այդպես կատակում էին... Արտակարգ հետաքրքիր է հայերի՝ միմյանց հետ հաղորդակցվելու եղանակը: Երեխաներն իրար հետ խոսում են անգլերեն, միջին տարիքի մարդիկ՝ ռուսերեն, տարեցները՝ հայերեն, այսպես կոչված՝ «գողական» լեզվով: Տարօրինակն այն էր, որ դեռ հասկանում էին իրար:

Ինձ անմիջապես ուղեկցեցին սեղանի մոտ: Մի քանի տեսակի հայկական օղիներ կային դրված: Մի՛ զարմացեք, մեզ է թվում, թե միայն ռուսներն են օղի արտադրում: Թեեւ անունները հայկական չեն եւ, որպես կանոն, բարձր դիրքեր ու տիտղոսներ էին հիշատակում. «Լորդից» ու «Մագնատից» պակաս կարծեն չկային:

Մնացածն աղոտ եմ հիշում... Հիշում եմ մի արտահայտություն՝ «սուրբ կենաց»... Բանն այն է, որ օղին լցնում էին մեծ բաժակներով ու պնդում, որ մինչեւ վերջ խմեն, քանի որ դա սուրբ կենաց է: Միտքս մնացել է նաև իմ առաջին մի քանի հարցերի պատասխանները: Մասնավորապես, հետաքրքրվեցի, թե ինչպես են սովորում երեխաները: Պարզվեց, որ հիմնականում հեռուստատեսության միջոցով են կրթություն ստանում: Միացրեցին այդ ալիքը: Մի մարդ նստած հազում ու ծիծաղում էր, ընդմիջումներին՝ խոսում, բայց քանի որ նաև բավական ծեր էր, բառերը հստակ չէր ասում՝ հատկապես երկար բառերը երկրորդ-երրորդ փորձից էր արտաբերում: Ինձ բացատրեցին, որ նա այդ հեռուստատեսության տերն է, հենց այնտեղ էլ ապրում է, այսինքն՝ հեռուստատեսության մեջ: Արտասահմանում տարիներ է անցկացրել, վերադառնալով՝ ձեռնամուխ եղել ձեռք բերած գիտելիքները հայրենակիցների հետ կիսելու ազնիվ գործին: Ուշ է վեր կենում, քանի որ ուշ էլ քնում է: Կեսօրին դաս է տալիս երեխաներին, նրանցից հետո՝ ուսանողներին, իրիկնադեմին՝ դասախոսներին, գիտնականներին, քաղաքական գործիչներին, հետո էլ,

մինչեւ գիշեր լսում ու գնահատում է երգուապարի, ասմունքի շնորհը ունեցողներին, սովորեցնում, թե ոնց երգեն-պարեն: Կար նաեւ հատուկ երեխաների համար նախատեսված մի հեռուստատեսություն, բայց, ըստ երեւոյթին, դեռ լեզու չելած երեխաների, որովհետեւ քանի անգամ միացրինք այդ ալիքը, ինչ-որ արարածներ էին ծվծվում, իսկ մնացած ժամանակ էլ, ինչպես տեղացիներն ինձ հայտնեցին, սովետական կինոներ էին ցույց տալիս...

Խոսեցինք նաեւ աշխատավարձերի մասին: Ասացին, որ բարձր չեն, բայց իրենց բավարարում են: Իրենք մտնում են իշխանության դրության մեջ: Երկրի ամենախոշոր գործարարների ձեռնարկությունները վնասով են աշխատում: Կառավարությունը ստիպված է օգնել նրանց: Իսկ միջին ու մասր բիզնեսի հարկերը, եթե նույնիսկ դրանք երկու անգամ էլ հավաքվեն, ինչը պատահում է, չեն հերիքի բյուջեն մեծացնելու, թոշակներն ու աշխատավարձերը բարձրացնելու համար: Հարցրեցի կարողանո՞ւմ են արոյոք իրենց վաստակած գումարներով գոնե երբեմն ձանապարհորդել: Պատասխանեցին, որ դրա անհրաժեշտությունը շատ չեն զգում եւ միացրին մի հեռուստաալիք, որի բոլոր հաղորդումները միեւնույն ընտանիքի անդամներ են վարում: Երբ որ նրանք արձակուրդին, Սուրբ Ծննդյան օրերի կամ որեւէ այլ առիթով մեկնում են արտասահման, նկարահանում ու այնքան մարդամասն են ցույց տալիս, թե ով որտեղ ու ինչպես է հանգստացել, որ կարող ես համարել, որ ինքը եղել ես այդ երկրում... Ճիշտ է, քանի որ բանտարկյալ էր փախել, այդ պահին դասական երաժշտություն էին հաղորդում...

Հետո... Օդին խփեց գլխիս, գիտակցությունս մշուշվեց... Ես ուզեցի գնալ լվացվելու, որ ուշի գամ: Դուրս եկա միջանցք, բայց սխալմամբ մի ուրիշ դուր քաշեցի, որը փակ էր: Մինչ ես փորձում էի գտնել բացելու ձեւը, թարգմանիչները, տանտերերը թափվեցին միջանցք: Նրանք ինձ ցույց տվեցին, թե որտեղ է լոգարանը: Հետաքրքրվեցի, թե ինչ կա փակ սենյակում: Նրանք տարբեր խուսափողական պատասխաններ էին տալիս: Պահանջեցի, որ բացեն: Եթե ամերիկացի լինեին, իհարկե, ինձ գրողի ծոցը կուղարկեին, անկախ նրանից, որ հարբած էի, բայց իմ գոռում-գոյցունը հայերի վրա այլ կերպ ազդեց: Բերեցին բանալին ու դուրը բացեցին: Կիսադատարկ սենյակի մի անկյունում ստվարաթղթ արկղեր էին դարսած իրար վրա մինչեւ առաստաղ, ու ծանր հոտ էր կանգնած: Ես առանց թույլտվություն հարցնելու մոտեցա-բացեցի մի քանիսը... Արկղների մեջ աղը էր: Հարցրեցի, թե դա ինչ է նշանակում: Պատմեցին, որ տարիներ առաջ ընդդիմության ներկայացուցիչներն իշխանության ապօրինությունների դեմ բողոքել են Եվրոպական ինչ-որ մարմինների, որից հետո երկրի դեկավարը հայտարարել է, թե աղբը տնից դուրս հանելը դավաճանություն է: Այդ օրվանից քաղաքաբետը դադարեցրել է աղբահանությունը: Բնակչությունը մամլում է աղբը, որ քիչ տեղ զբաղեցնի, ու պահում տանը: Քաղաքապետարանն արտասահմանից հատուկ աղբի մամլիչներ է ներկրում, որոնք չափավոր գներով վաճառում են բնակարանատերերին: Աղբահորերն էլ սեփականաշնորհել են՝ դրանց վաճառքից գոյացած ու աղբահանության դադարեցման շնորհիվ խնայված միջոցներն ուղղելով մայրաքաղաքի պաշտոնեության բազմաթիվ կարիքներին...

## 4.

- Առավոտ զարթնեցի դռան ուժեղ թակոցներից: Թարգմանիչս էր: Ասաց, որ մյուսները վաղուց վեր են կացել ու ճանապարհվել հայկական բարձր լեռնային լիճը՝ Սեւան, նրա շրջակայքում գտնվող մի վայր, ուր ազգային մեծ տոնախմբություն է կայանալու: Գլուխս պայթում էր, չէի հիշում, թե ինչպես եմ հասել հյուրանոց: Ամենավատն այն էր, որ անհետացել էր տեսախոսս: Ամաչելով՝ տեղյակ պահեցի թարգմանչին: Նա շատ մտահոգվեց, խոստացավ, որ բոլոր հեռուստատեսություններով հայտարարություն կտան: Ես խնդրեցի ժամանակ տալ, որ ցնցուղի տակ կանգնեմ, հետո արագ մի նյութ թելադրեմ «Նյու Յորք թայմսի» արտասահմանյան թղթակցությունների համակարգչին: Մեր այցելության նախավերջին օրն էր: Մտադիր էի այդ պատրվակով մնալ հյուրանոցում, իսկ խմբից պոկվելուց հետո գքաղվել Զորջի որոնումներով: Թարգմանիչն ասաց, որ ցնցուղի ինձ անհրաժեշտ է՝ չի առարկում, բայց նյութը թելադրելը հետաձգեմ, քանի որ հայաստանցիներին կվիրավորեմ, եթե իրենց համար նշանակալի այս իրադարձությանը չմասնակցեմ: Չէ որ երկիրը նշում է հայերից մարդկության առաջացման յոթանասունինը հազար հինգ հարյուրերորդ տարեդարձը: Իրավացի էր: Նաեւ, որպես նյութ, դա ավելի էական էր, քան այն ամենը, որի մասին մտադիր էի սարքել հոդվածս: Արագ լողացա, ավտոմեքենայի մեջ մի կես ժամ քննեցի, որից մի փոքր առույգացա: Միջոցառումն արդեն սկսվել էր, երբ տեղ հասանք՝ մի ամայի վայր: Բլրի լանջին ամբիոն էին դրել, որի շուրջը կանգնած էին հանրապետության բարձրագույն այրերն ու օտարերկրյա հյուրերը: Ելույթ էր ունենում մի բերետավոր համակրեի ծերուկ՝ կիմեր հարյուրին մոտ: Մինչ թարգմանիչս բազմության միջով ճանփա էր բացում ինձ համար՝ գուգահեռ բացատրելով, որ հետորդ խոսում է հայերի կողմից էլեկտրականության եւ մասնավորապես էլեկտրական արդուկի գյուտի մասին, ես օգտվեցի պահից, երբ նա մեջքով էր դեպի ինձ, եւ այլ ուղղությամբ շարժվեցի, մինչեւ որ տեսադաշտից կորավ:

Հավաքվածներից մեկին, որը վարսունիինգին մոտ, բարձրահասակ, սիհար, մորուքավոր մարդ էր, չնայած վաղ ժամին՝ քեֆը տեղը, հարցրի, թե ի՞նչ են խոսել մինչեւ իմ գալը: Նա անգերեն վարժ չէր խոսում, գուցե այդ պատճառով տեղ-տեղ չէի հասկանում, թե ինչ նկատի ուներ, բայց բացատրվում էր: Եթե բառացի կրկնեմ ասածը, այսպես էր հնչում գլուխ են հարթուկում: Ես խնդրեցի ավելի պարզ բացատրել: Պատմեց, որ վերջերս այստեղ մի հին, ութիազարանյա բնակավայր են պեղել, որտեղ չի գտնվել հայկական ավանդական թոնիք՝ դա հողի մեջ թաղված լայն խողովակի ձեւ ունեցող կավե վառարան է, որում հայերը հաց են թիւել, միևնուով եւ այլն: Ահա սրանից ականավոր գիտնականը, որին ես տեսնում էի ամբիոնի մոտ, եզրակացրել էր, որ հայերի նախնիներն այլ միջոց՝ էլեկտրական վառարան են օգտագործել: Իսկ եթե էլեկտրականություն եղել է, ակնհայտ է, որ այն միայն կերակուր եփելու համար չեն օգտագործել, այլ պատրաստել են նաեւ աշխարհում առաջին էլեկտրական արդուկը, կարի մեքենան եւ այլն: Մտտակա բնակավայրերի հետ կապող ճանապարհ նույնպես չէր հայտնաբերվել: Դա ակնհայտ ապացույց էր, որ բջջային

հերախոսն է եղել հաղորդակցության, վաղնջական քաղաքակրթության առաջին, դեռևս աղքատիկ գիտելիքների փոխանակության հիմնական միջոցը:

Ելույթի այն մասը, որ առնչվում էր մոտակա ժայռերից մեկի վրա ինը հազար տարի առաջ փորագրված հայերենի «Ա» տառին նմանվող նշանին, որն այլ կերպ չէր կարող ընկալվել, քան աշխարհի հնագույն այբուբենի պերճախոս Վկայություն, հավաքվածները բավական անտարբեր էին լսում. ըստ ամենայնի, դա նրանց համար նորություն չէր: Շարունակությունը նորից լարեց բոլորի ուշադրությունը: Հայ հետազոտողը սենսացիոն հայտարարություն արեց, թե մեծատառ «Ա»-ն միայն մի բան կարող է նշանակել՝ Ասլանտիդա: Այս ժայռի մոտ ծովային խխունջներ են հայտնաբերվել: Դրանք մնացել են այն ժամանակներից, երբ համաշխարհային ջրհեղեղի արդյունքում հայկական բարձրավանդակը վերածվել է կղզու: Միայն գիտությունից հեռու կանգնած մարդիկ կարող են ենթադրել, թե համաշխարհային օվկիանոսի մակարդակը մինչեւ Արարատի գագաթի 5165 մետր բարձրությանը հասել է միանգամից: Երկարատեւ մի փուլ է եղել, երբ ցածրադիր երկրները ջրի տակ են անցել, իսկ Հայաստանը, լինելով լեռնային, շարունակել է գոյատեւել որպես կղզի-պետություն, որտեղ, ինքնին հասկանալի է, կատարյալ հասարակություն է ստեղծվել: «Ասլանտիդա» բարի առաջին երկու տարու «Արարատ» բարի համառոտագրությունն է՝ քարի վրա ամբողջ չես հատի, «լանտ»-ը «լանդ»-ի փոփոխված ձեւն է, որը բազմաթիվ լեզուներում նշանակում է «երկիր», «հիդա»-ն հունական վերջնաձանցն է: Այսինքն՝ գործ ունենք Արարատյան երկրի օտար անվանման հետ:

Այնուհետեւ բանախոսը ներկայացրեց հանդիսության գլխավոր արիթին վերաբերող տեսությունը, ըստ որի՝ բոլոր մարդիկ հայերից են առաջացել. սա նույնպես, դատելով լսարանի արձագանքից, նրան ծանոթ էր: Հայերի մեջ կան թե՛ թուխ, թե՛ սպիտակ մաշկով մարդիկ, բայց այն, որ բոլոր ազգերին նրանք ծնունդ տված լինեն, ինձ մի պահ անհամոզիչ թվաց: «Կան վայ-գիտնականներ (նրանց երեւի համամիտ են նույնիսկ ձեզնից ոմանք), որ մինչեւ այսօր էլ կասկածում են, թե կարմրամորթները կամ սեւամորթները մեզնից չեն առաջացել, քանի որ ամեն մի այլ մարդաբանական տիպ մեր ժողովողի մեջ կա. նայեք թեկուզ ձեր շուրջը,- կարծես մտքերս կարդալով՝ ազդարարեց գիտնականը:- Սակայն հեռավոր ժամանակներում, երբ մարդիկ չեն թաքցրել իրենց ապրումները, անշուշտ, նրանք հաճախ ամոթից շիկնել են կամ, ինչպես այսօր էլ պահպանվել է արտահայտությունը մեր խոսակցական լեզվում, կարմրել են: Ամենաանկեղծների դեմքին այդ գույնը դարձել է տիրապետող: Ի վերջո մեր ամոթխած եղբայրները որոշել են ապրել աչքից հնարավորին չափ հեռու որեւէ տեղում եւ գաղթել են Ամերիկա: Առայսօր էլ այդպես չէ՞: Հայաստանում են մնում նրանք, ում երեսն ավելի պինդ է...»

Թերահավատներն ավելի ամուր են համարում իրենց դիրքերը սեւամորթների հարցում: Բայց նրանց տիած անակնկալ է սպասում: Ի՞նչ պետք է ասեն, օրինակ, հայկական հինավուրց ասացվածքի մասին, թե՛ ուզողի մի երեսն է սեւ, չտվողի՝ երկու: Ի՞նչ եղան այն բազմաթիվ մարդիկ, ումից ինչ-որ բան են ուզել, եւ նրանք չեն տվել: Չէ՞ որ նրանց երկու երեսն էլ սեւացել է: Կա սխալ, հակագիտական տեսակետ, թե նրանք ժլատ են

Եղել: Ըստ ամենայնի, նրանք պարզապես ոչինչ չեն ունեցել տալու: Բնական սեգրեգացիայի արդյունքում այսպիսինները միավորվել են եւ տեղաշարժվել դեպի հարավ, դեպի հարավի բերրի հողերը, ուր տարվա բոլոր եղանակներին հնարավոր է կերակրվել բնության բարիքներով, ուր կլոր տարին տաք է՝ հագուստի կարիք չկա: Վերջին հանգամանքը նպաստել է, որ նրանք արեւառվեն այն աստիճան, որ ժամանակի ընթացքում վերանա սեւ դեմքերի ու սպիտակ մարմինների տարբերությունը: Ինչ վերաբերում է մեկ երեսը սեւ մարդկանց ցեղախնճին՝ ուզողների տեսակին, բավարար չափով չի հիմնավորվում այն վարկածը, թե դրանք արվեստագետներն են, քանի որ, գոնե այսօր, արտաքրության չեն տարբերվում ուրիշներից... Կարծում ենք, որ գիտության մատենագրքի այդ սպիտակ էջը դեռ սպասում է լրացվելու ակնարթին: Այս տեսակի հետքերը կզնվեն՝ լինի հնագիտական շերտերից մեկում, թե բնության որեւէ կուսական անկյունում, որը հրաշքով թաքուն է մնացել քաղաքակրթության ամենատես աչքից: Բավական է հիշել առասպելական համարվող Տրոյայի հայտնագործման պատմությունը»:

Մրձարանի հեռուստացույցով ինչ-որ ֆիլմ էր սկսվում: Ֆրանսիական էր՝ Մարտինը սիրում էր այդպիսիք եւ մի պահ շեղվեց՝ կենտրոնանալով մեծ էկրանի վրա: Առաջին մեկ-երկու րոպեի ընթացքում միայն կնոջ ոտքեր էին ցույց տալիս: Դրանք մերենայից իջան, մոտեցան տան դրանը, մտան միջանցք, խոհանոց, բազմոցին նստելուց հետո աջը ձախի վրա բարձրացավ եւ այլն: Կարծես հին՝ Ղիսնեյի մուլտերից լիներ, բայց առանց կենդանիների՝ թոնի ու Զերիի:

- Դեմ չե՞ք, որ մեր խմիչքները կրկնեմ, - հարցոր սեղանակիցներիս:
- Չգիտեմ, թե ին բացակայությամբ ինչ էր ասել Մարտինին Աննան, բայց երբ նորից զբաղեցրի աթոռս, նա կարմրելով ոհմեց ինձ.
- Ների՛ր, Պոլ, ես վերապատմում եմ այն, ինչ ինձ համար թարգմանեցին:

Ին մտքով չէր էլ անցել նեղանալ նրանից. չափից ավելի երկար էինք ընկերություն արել, որ կասկածեի, թե նա ընդունակ է ռասայական խտրականության: Առավել եւս բացառված էր, որ միտումնավոր պատմեր իմ ցեղակիցների առաջացման այդ անհեթեր վարկածը, քանի որ կար սեւամորթ լինելուց ավելի նուրբ հանգամանք: Աննան, որի մաշկը բաց շոկոլադագույն էր, իսկ աչքերը՝ կապույտ. մոր կողմից սեւամորթ էր: Մարտինը նրա ներկայությամբ նույնիսկ չէր հայինում, ինչը լրագրողական միջավայրում սովորական բան էր, ուր մնաց ցեղային խտրականության որեւէ նշույլ ցուցաբերեր: Եւ ճիշտ էլ անում էր, որ չէր հայինում. դա չէր սագում նրա մանկական դեմքին, որը երիզվում էր զուտ անգիտական սանրվածքով կտրված շագանակագույն խոպոպներով:

- Ես թիթիացրի Մարտինի ուսին:
- Պոլ էլ սրտիդ չառնես, բայց դատելով այդ տեսությունից՝ սպիտակների մաշկի գույնը չի փոխվել, քանի որ ոչ որեւէ բան ուզել են, ոչ էլ՝ տվել:

Նա ակնհայտորեն մտադրվեց ինչ-որ բան ասել, բայց երեւի բավարար սրամիտ պատասխան գլուխը չեկավ:

- Բացի ամբողջ աշխարհին տիրելուց, - ավարտեցի ես:
- Ես քեզ սիրում եմ, Պոլ... - ասաց Աննան:

Սիրտս կծկվեց: Միայն թե «սիրում եմ»-ը Աննայի շուրթերից հնչեց այնպես, ինչպես միայն նա էր կարողանում արտաքերել՝ շատ ընկերաբար. իսկական սիրո ոչ մի երանգ չէր պարունակում: Ավելին, այդ առաջաբանով նախապատրաստում էր իր անհամաձայնությունը ինձ հետ՝ այն մեղմելով հաղորդավարական հմայիչ ժայռով, որը պաշտում էին «Նյու Յորք – 1» ալիքի հեռուստադիտողները:

- ...Քայց հիմա դու՛ կարող ես վիրավորել Մարտինին, որին ես նույնպես սիրում եմ: Ավելի լավ է թողնես, որ շարունակի պատմությունը:

## 5.

- Մենք կանգնած էինք այրող արեւի տակ: «Նա պատմաբան չէ, որ չի ավատաք,- բանախոսի տեսությունը մեկնաբանեց իմ նոր ծանոթը՝ նախկին լրագրող, ինչպես պարզվեց,,՝ ռադիոֆիզիկոս է, ակադեմիկոս»: Նրա խմածության ու թերի անգլերենի պատճառով դժվարանում էի կռահել՝ լո՞ւրջ էր խսում, թե՝ ոչ... Ես հայացքով ստվեր էի փնտրում, որ ապաստանեի, երբ հայտնեց, որ քիչ հեռու իրենց վրանն է, որ նախորդ օրն են ընկերների հետ խփել՝ առանց իմանալու, որ լذի այս ամայի ափին նման բազմություն է կուտակվելու՝ կարող են հյուրընկալվել, երբ ձառերից հագենամ: Նա ցոյց տվեց մի քանի հարյուր յարդ հեռու գտնվող խունացած վրանը, որի կողքին թերեւս իրենից էլ տարիքով մեծ մի քանի կին ու տղամարդ էին նստած ձամփորդական սեղանի շուրջ՝ մենավոր ծառի տակ: Նրա հրավերն ինձ գայթակղեց, բայց այդ պահին տեսա, որ միաժամանակ մի քանի կողմից ինձ են մոտենում մեր խմբի թարգմանիչները: Թաքնվելու ձար չկար: Ինքս էլ հստակ չպատկերացնելով, չգիտեմ թե ինչո՞ւ՝ երեմնի լրագրողին առաջարկեցի հանդիպել երեկոյան՝ միասին վիսկի խմելու: Նա զարմացավ, թե՝ արածը մի քան չէր, ուժը պատաժի չափով մի քանի նախադասություն է թարգմանել անգլերեն, բայց երբ պնդեցի, ընդունեց հրավերս՝ հնարավոր համարելով, որ երեկոյան արդեն Երեւանում լինի: Հարցրեց, թե գիտե՞մ արդյոք մետրոյի «Երիտասարդական» կայարանը: Ժամանակ չկար, որ խնդրեի բացատրել. ստեցի, թե գիտեմ: Ասաց, որ մետրոյից ոչ հեռու գետնից դուրս եկող երկու ձեռքի արձան կա գրոսայգում: Եթե այնտեղ հանդիպենք, շուրջը բազմաթիվ էժան սրճարաններ կան, կարող ենք դրանցից մեկում նստել: Պայմանավորվեցինք՝ ժամը յոթին, հետո ես արագ քաշվեցի մի կողմ, որ թարգմանիչները մեզ միասին չտեսնեն: Նրանց հետ բարձրացա բլրի լանջը:

Ճառերը շարունակվեցին եւս մի քանի ժամ: Հաճախ հիշատակվում էր մի գուտ հայկական երեւոյթ՝ քարից հաց քամելը: Եթե նկատի ունենանք, որ այդ տեխնոլոգիան կիրառվել է դարեր, քարի բավականին մեծ պաշար դեռ մնացել էր երկրում: Մինչ հանդիսավոր արարողությունն ընթանում էր, ինձ ծանոթացրին մի գիտնականի հետ, որը հարցրեց, թե արդյոք չէի՞ ուզենա ներդրում անել այնպիսի նոր ու հեղափոխական արտադրության մեջ, ինչպիսին քարից յուղ, այսինքն՝ նավթ, քամելն է: Նավթը, մի շարք այլ լեզուների նման, բուն հայերեն բառով հնչում է որպես քարի յուղ՝ «քարյուղ»: Գիտնականը պնդում էր, որ հաջող փորձեր է կատարել արհեստական ձանապարհով ստանալու այն, ինչ բնության մեջ

ինքնաբերաբար է կատարվում: Այնուհետեւ մի քանի ուրիշներ ջանացին ինձ գայթակղել հայկական գուլալ աղբյուրների ջուրն ու լեռնային առողջարար օդը խողովակաշարերով Միացյալ Նահանգներ հասցնելու գաղափարով: Նրանց չվշտացնելու համար ես խոստացա մտածել:

Ես պատկերացրի Մարտինի ներդրման չափը... Նա վարկով մի թանկ տուն էր գնել, որի պատճառով ամսական այնքան մեծ տոկոս էր տալիս աշխատավարձից, որ ժամանակ առ ժամանակ ինձանից պարտք էր վերցնում: Երբեմն նա ստիպված էր այնքան խնայող լինել, որ իր սիրած մրգային յոգուրտից օրական տասնինգի փոխարեն տասն էր ուտում:

- Քիչ անց ելույթ ունեցավ նաեւ Հայաստանի Նախագահը, որը խոսեց քարից յուղ քամելու, հայկական գուլալ աղբյուրների ջուրն ու լեռնային առողջարար օդը խողովակաշարերով Միացյալ Նահանգներ հասցնելու նոր հեռանկարների մասին, որոնց շնորհիվ հազարավոր նոր աշխատատեղեր կբացվեն: Այդ ընթացքում նա ժամանակ առ ժամանակ խրախուսական հայացքներ էր ձգում իմ կողմը, իսկ հավաքվածները ծափահարում էին:

...Հետո հյուրասիրություն սկսվեց: Բացօրյա երկար ու ճոխ սեղան էին գցել: Հանդիսությանը եկածների մի մասը հեռվում կանգնած նայում էր խնջույքի սեղանի կողմը: Ես տպավորություն ստացա, որ նրանք քաղցած էին:

Ես քիչ խմեցի, որքան էլ պնդում էին, որ չիրաժարվեմ, եւ գովում հայրենական կոնյակն ու գինին, գլխացավս դեռ զգացնել էր տալիս իրեն: Ի դեպ, տանտերերից համարյա բոլոր ռուսական օդի էին խմում:

Բազմաթիվ կենացներ բարձրացրին հանուն երկրի բարօրության: Ճիշտ է, Հայաստանի փոխարեն ասում էին Ավետյաց երկիր՝ վկայակոչելով Աստվածաշունչը, ըստ որի՝ որախտն այստեղ է գտնվել: Ես, սովորությանս համաձայն, նախքան մեկնելս բավական շատ գրականություն էի կարդացել Հայաստանի մասին: Խսկապես այդպիսի վարկած կար, նաեւ իին քարտեզների էի հանդիպել՝ նույն տեսակետի վրա խարսխված, բայց խոսքը բոլոր դեպքերում Միջագետքի մասին էր, որի մի մասն ինչ-որ ժամանակ իրոք պատկանել է հայերին: Հակառակ այն բանին, որ շարունակ հղումներ էին անում իրենց պատմությանը, ամեն երկրորդը կենացն ավարտվում էր կոչով, թե պարզենք՝ «Ո՞վ ենք մենք, որտեղի՞ց ենք գալիս եւ ո՞ւր ենք գնում»: Կողքիս նստածները զուգահեռաբար ինձ ներկայացնում էին, թե ինչքան մեծ է հայ ազգի վաստակը քրիստոնեական արժեքների հաստատման գործում: Նրանք ակնկալում էին, որ, Ամերիկա Վերադարնալով, ես կպաշտպանեմ Հայաստանի՝ աշխարհում առաջինը քրիստոնեություն ընդունած պետության դատը... առանց վայրկյան իսկ մտքներով անցկացնելու, թե միգուցե ես քրիստոնյա չեմ չէ՞ որ Նյու Յորքի սպիտակ բնակչության կեսը հրեա է: Առանց իմանալու իրականությունը՝ այն, որ մորս կողմից հրեա եմ եւ ինքս կիսված եմ այդ երկու քաղաքակրթությունների միջեւ... Ի վերջո, հրեաները պակաս չեն հալածվել քրիստոնյաների կողմից, քան հայերը՝ մուսուլմանների:

Ոմանք սկսեցին հայդուկային երգեր երգել «շուն ոստիսի» դեմ տարած հաղթանակների մասին: Ավելի շատ խմելուց հետո երգում էին նոյն այդ թշնամիների երգերը՝ գիտեք, Թուրքիայում եղել եմ, նրանց մուղամները, ժողովրդական երաժշտությունը ձանաչում եմ: Ի դեպ,

թուղթական երգերի հայերեն կատարումներ կարող էիր լսել նաեւ փողոցում, նույնիսկ՝ հեռուստատեսությամբ:

Խնջույքը երկարում էր՝ հարցրեցի, թե երբ ենք վերադարնալու Երեւան: Ասացին, որ յոթն անց կես պետք է Օպերայի շենքում տոնական համերգի ներկա լինենք, բայց եթե մի փոքր ուշանանք, դժբախտություն չէ՝ առանց մեզ չեն սկսի: Խնդրեցի ինձ հասցնել Երեւան: Առաջարկեցին սպասել եւ մյուսների հետ ճամփա ընկնել: Հիշեցրի, որ պետք է աշխատեմ հոդվածին վրա՝ թարմ տպավորություններս գրառելով: Թարգմանիչս համաձայնեց գնալ պարզելու, թե հնարավո՞ր է արդյոք, որ մեզ ավելի վաղ տրամադրվի ավտոմեքենա: Որոշ ժամանակ անց եկավ դրական պատասխանով: Ճանապարհին նա հետաքրքրվեց, թե ի՞նչ են գրելու, ի՞նչ ծավալ կունենա նյութը: Ասացի, որ բովանդակությունը պատմելու սովորություն չունեմ թող լինի անակնկալ, իսկ ծավալի շուրջ հյուրանոցից զանգելու ու խորհրդակցելու եմ խմբագրիս հետ: Նա կասկած հայտնեց, որ հյուրանոցից կարողանամ զանգել Ամերիկա. քաղաքի կենտրոնում հեռախոսի գծերի վերանորոգում է: - Այդ դեպքում, - առաջարկեցի ես, - Երեւանում կանգնենք որեւէ խանութի մոտ, որպեսզի նոր տեսախոս գնեմ: Ասաց, որ տեսախոսը, այսինքն՝ սարքը, խնդիր չէ, բայց քարտ չեմ կարող ձեռք բերել, որովհետեւ մեծ հերթ կա, հազարավոր մարդիկ են ցուցակագրված: Խոսսովանեց, որ կապն առհասարակ այստեղ զգվելի է: Բայց դա հայերի մեղքը չէ, դեռ անցած հազարամյակից հեռահղորդակցության մենաշնորհը մի հունական ընկերության պատկանում: Կառավարությունը, բնակչության նման, խիստ դժգոհ է, նախարարները քննադատում են ընկերությանը, անպատվում վերջին բառերով: Միայն սեռական բնույթի հայիոյանքներ չեն տալիս, մնացած ամեն ինչ ասում են... Բայց արդյունքն առայժմ միշտարական չէ: Որպես հեռահղորդակցության ոլորտի զարգացումը տապալելու, հարյուրավոր միլիոն դոլարների ներդրումների պարտավորությունը չկատարելու պատիժ, կառավարությունը վերջեն ընկերությանը ստիպել է հերթական անգամ երկարացնել մենաշնորհի պայմանագիրը, որպեսզի հույները վերացնեն իրենց թույլ տված սխալները, ի վերջո սրափվեն: Սրանք էլ կարծես թե սկսել են իրենց կողմից բարի կամքի որոշ դրսեւորումներ ցուցաբերել: Հեռախոսային ցանցում նորամուծություններ են կատարել: Այնտեղ ծածկագրում են որոշակի մարդու ազգանուն եւ հայիոյական արտահայտություններ: Հենց որ ազգանունն ու արտահայտությունները միաժամանակ արտասանվում են, հեռախոսը երկար ժամանակով անջատվում է: Այդպես բաժանորդներին ստիպում են բարեկիրթ լինել հեռախոսից օգտվելիս: Առայժմ, փորձնական կարգով, երկրի մի քանի դեկավարների անուն-ազգանուն են ծածկագրել: Սկզբում հեռախոսները զանգվածայնորեն անջատվել են, բայց, տեսնելով, թե ինչպես են իրենց աննրբանկատության պատճառով զրկվում ամենաստվորական ներքաղաքային հեռախոսակապից, մարդիկ հետզհետե յուրացրել են լավ վարվեցողության այս մի վարքականոնը: Ընկերությունը նաեւ անվճար է դարձրել «Գործուն զղջման հեռախոսը», որով մարդիկ զանգահարում ու զղում են իրենց կատարած այնպիսի մեղքերի համար, որոնց համար դեռ դատական հետապնդման չեն ենթարկվել կամ նույնիսկ չեն գործել:

Սրճարանի հեռուստաէկրանին մի պահ փայլատակեց Բրիթնի Սփիրոսը: Դա նորից շեղեց Մարտինի ուշադրությունը: Ինձ ապշեցնում էր, թե ինչպես կարող էր նրան դուր գալ Եւ Աննան՝ լուրջ, ուղղամիտ, հանգիստ ու ազնիվ դեմքով, թե՛ քառասուն տարեկանների կուռք Բրիթնին, որի հագինը միայն պայմանականորեն կարելի էր զգեստ կոչել:

- Կարուծելի համար նախատեսված մի քանի գունավոր թելն օգտագործել է ոչ ըստ նշանակության,- ասացի ես:

Մարտինը բարձրացրեց հոնքերը.

- Կանացի մարմնի բարեմասնությունները քեզ այլեւս դուր չե՞ն գալիս:

- Դուր գալը՝ գալիս են, բայց նա սթրիփ-բարերի գործին է խփում: Մենակ չէ, իհարկե, այդ բանում, բայց աղջկը մոռանում է, որ վաղուց քսան տարեկան չէ,- ասացի ես: - Իսկ քեզ պետք է Ֆրեյդին վերընթերցել.

Բրիթնին քեզանից մեծ կլինի առնվազն տասը տարի... Չհաշված որ՝ արդեն պետք է անգիր իմանայիր նրա բարեմասնությունները:

Աննային երեւի լրիվ կլանել էր Հայաստանի թեման, որ հերթական հարցով Մարտինին փրկեց իմ ձանկերից.

- Ինչ որ ճշմարտանման բաներ ասել են քեզ, բայց հավատալս չի գալիս, որ աղքատ երկրում կարող է տեսախոսի հերթ լինել:

- Դա շատ լավ հարց է,- ասաց Մարտինը:  
- Դու իրո՞ք հակասություն չես տեսնում այդտեղ,- նեղացավ Աննան:  
- Իսկապես շատ լավ հարց է, չեմ կատակում,- կրկնեց Մարտինը:-  
Ես դեռ նախորդ օրերին էի ուշադրություն դարձրել, որ երիտասարդների մեծամասնությունը տեսախոս ունի: Դա նույնիսկ փողոցում էր նկատելի: Հայերը պարզապես մոլուցք ունեն նոր տեխնոլոգիաների եւ կրթության հանդեպ: Նույն երիտասարդները, բոլորն անխտիր, սովորում են համալսարաններում, ինչը նույնպես հիմնականում վճարովի է: Դիպլոմը, պարզ է, հարկավոր է լավ աշխատանք ձարելու համար, բայց եթե բոլորն ունեն դրանից, իսկ գիտելիքներին ու գնահատականներին ոչ ոք չի նայում, էլ ինչ իմաստ ունի այդ մրցավազքը: Ավելի ճիշտ չէ՞ր լինի, որ ընդհանուր պայմանավորվածությամբ բոլորը բավարարվեին դպրոցական կրթությամբ:

## 6.

- Երեւան հազիվ մտած՝ ընկանք խցանման մեջ: Տասնինգ-քսան րոպե անշարժ կանգնած էինք: Իմ ուղեկիցներն անհանգստության նշաններ ցույց չէին տալիս: Ինձ չէր թվում, որ Երեւանն այնքան մեծ է, որ այնտեղ խցանումներ լինեին: Հետո մենք Ամերիկայում սովոր ենք, որ քաղաք մտնող մայրուղիներում խցանումներ լինեն առավոտյան, երբ մարդիկ աշխատանքի են գնում քաղաքամերձ վայրերի իրենց տներից, կամ Երեկոյան, երբ բոլորը վերադառնում են: Թարգմանիչս ասաց, որ խցանումը բնորոշ չէ մայրաքաղաքին: Կամ վթար է տեղի ունեցել, կամ լուսակիրներն են ինչ-որ պատճառով անջատվել, եւ երթեւեկությունը ոստիկաններն են կարգավորում: Մոտենում էր ժամը վեցը: Ես չկարողացա համբերել. իջա, որ իմանամ ինչ է պատահել: Հարյուր յարդից ավելի քայլելուց հետո տեսա, որ փողոցի մեջտեղում երկուական թանկարժեք ջիա է կանգնած երկու

կողմից, ջահել վարորդները, սակրած գլուխները պատուհանից հանած, խոսում են իրար հետ: Հետո նրանք իջան մեքենաներից, համբուրվեցին, նորից դեկին նստեցին եւ շարժվեցին: Խցանումը բացվեց: Երբ մեր մեքենան ինձ վերցրեց, ես նկարագրեցի տեսածն՝ խնդրելով մեկնաբանել: Թարգմանիչս բացատրեց, որ երիտասարդները հավանաբար երկար ժամանակ՝ մի քանի օր, իրար տեսած չեն եղել եւ կանգնել են իրարից կարուտներն առնելու: Դա նախատեսված է օրենքով, որի ընդունմամբ կանխվել են հարյուրավոր վիճաբանություններ, ծեծկոտուքներ, դանակահարություններ ու սպանություններ: Բանն այն է, որ երկար ժամանակ իրար չտեսած երիտասարդները գրգռված են լինում, կարող են հայիոյել, զենք քաշել իրենց գրուցք խանգարողների վրա... Առաջ էլ շատ վարորդներ գիտեին, որ այդ պահերին ավելի լավ է չմիջամտել, իսկ եթե վեճի մեջ մտնես, կրիվ ծագի, ու դու նույնիսկ հաղթես, մեկ էլ տեսար պարզվի, որ այդ ընթացքում պատահաբար զարդախոսել ես ոչ միայն երիտասարդին, այլև նրա հորը, որը կարեւոր պաշտոնյա է, կամ եթե թիկնապահ է «տիրոջը», որոնց ինքնասիրությունն օրենքով պաշտպանում է իր ամբողջ ուժով: Այդ դեպքում գործուն զղումն էլ չէր օգնելու... Այնուամենայնիվ, ոմանք չեն դիմանում դիտողություն անելու գայթակղությանը, ինչը հաճախ ողբերգական հետեւանքներ էր ունենում նրանց համար:

Հազիկ անցանք Երեւանի Ավան կոչվող արվարձանը, երբ մեքենաները նորից կանգնեցին:

Աստիճանաբար ինձ լքում էր հոյսը, թե ժամանակ ու հնարավորություն կլինի հանդիպել իշխանությունից անկախ որեւէ մեկի հետ եւ ձեռք բերել տեղեկությունները, որոնց վերաբերյալ միայն աղոտ ենթադրություններ ունեի: Հարցի, թե արդյո՞ք հնարավոր է որեւէ ընդդիմադիր թերթի խմբագրություն այցելել: - Անշուշտ,- եղավ պատախանը, - բայց խմբագրությունները փակ են. բոլոր թերթերը, ընդդիմադիր են, թե ոչ, ամառը մի քանի շաբաթով արձակուրդ են գնում: Թեեւ, եթե նույնիսկ արձակուրդում չլինեին, հեշտությամբ չէր հաջողվելու խմբագրություններ ներափանցել, քանի որ դրանք, հայկական ավանդական հյուրասիրությանը հակառակ, ճաղապատ դռներով ու լուսամուտներով մեկուսացած են ժողովրդից՝ իբր հարձակումներից վախենալով: Եւ դա՝ հակառակ այն բանին, որ իշխանությունն ընդդիմադիր մանուկի գործունեությանը զարկ տալու համար հաճախ ինքն է կազմակերպված ձեւով գնում ամբողջ տպաքանակը, հատկապես՝ երբ սուր, տաղանդավոր հոդվածներ են իրապարակում: Կարծիք կա, թերեւս ոչ անհիմն, որ ընդդիմադիր թերթերը չարաշահում են այդ հոգատարությունը, ագահություն ցուցաբերում: Ասենք, նախօրոք ազդ տպագրելով, թե ինչ-որ բարձր պաշտոնյայի ստվերային գործունեությունը բացահայտող տեղեկատվություն են իրապարակելու կամ մտադիր են իրենց ընթերցողների շրջանում նախնական ընտրություն անցկացնել, որ պարզեն, թե քաղաքական գործիչներից ով ինչ վարկանիշ ունի իրականում, հետո տվյալ համարը լուս են ընծայում կրկնակի տպաքանակով, եւ այդ պաշտոնյան կամ իշխանության որեւէ կառույց գնում է թերթի բոլոր օրինակները»:

...Տասնիինգ րոպեից խցանումը վերացավ, բայց մի քանի րոպե անց, երբ անցել էինք Բուսաբանական այգին, «Զրաշխարհ» կոչվող հանգստի վայրը, Կենդանաբանական այգին (դրանցից յուրաքանչյուրն ինձ առաջարկվում էր շրջել ու գոնե թռուցիկ ծանոթանալ, բայց ես մերժում էի), կրկնվեց նույնը՝ կանգնեցինք: Նայեցի ժամացուցիս՝ տեղի ժամանակով 18.38 էր:

- Ի՞նչ պատահեց, էլի իրար կարոտած ջահելնե՞ր են հանդիպել,- հարցրի ես:

- Ըստ Երեւոյթին:

Ուրեմն, լավագույն դեպքում յոթի կողմերը կիասնեի հյուրանոց, որտեղից, Աստված գիտե, կիաջողվե՞ր աննկատ դուրս պրօնել: Վատագույն դեպքում քաղաքի կենտրոնում կլինիկնը տոնական համերգի սկսվելուն նոտ, եւ ինձ միանգամից քարշ կտային այնտեղ: Մինչ ես մտանտում էի, թե ինչ կարելի է նախաձեռնել, հանկարծ թարգմանիչն ասաց.

- Իմիջիալոց, ես ողջունում եմ, որ Երևար ականջ չորեցիք այն մորուքավորին: Նա նախկինում հայտնի լրագրող էր, բայց իրեն տվեց հարբեցողության ու կործանվեց. համոզված եմ, որ չարախոսությունների հեղեղ է տեղացել մեր իշխանությունների հասցեին:

Ես մինչեւ այդ պահը միամտաբար համոզված էի, որ մեր զրույցը գաղտնի է մնացել ուղեկիցներիցս:

- Ես կորցրել էի ծեզ քազմության մեջ, եւ նա պարզապես ինձ համար թարգմանում էր ակադեմիկոսի ելույթը: Ուրիշ ոչինչ չի ասել:

- Խոհեմ է վարվել: Իր կժու լեզվի ու արկածախնդրության պատճառով նա այնպիսի սկանդալների մեջ է ընկել, որ եթե մի փոքր մասն էլ ծեզ պատմեմ, կափսոսաք, որ հետո շփվել եք: Իր քախտից թողեց լրագրությունը, հակառակ դեպքում այնքան թշնամիներ էր ուներ քաղաքական ու տնտեսական տարբեր խմբավորումներում, որ դժվար թե մինչեւ հիմա ողջ մնար:

Ես համարյա չեմ լսում նրան: Մի քան էր ուրախալի, որ մորուքավորը հայտնի մարդ է եղել նախկինում: Անկախ ինձանից ճիշտ էի վարվել՝ պայմանավորվելով հետո հանդիպել: Դա հույս էր ներշնչում, որ նրա միջոցով կարող էի Զորջի հետքը գտնել...

Նորից իմ համբերությունն առաջինը սպառվեց, ու իջա մեքենայից՝ պարզելու խցանման պատճառը: Նորից ջիպեր էին փակել Երթեւեկությունը: Նախորդ անգամ դեմքերին ուշադիր չեմ նայել, բայց վարորդներն էլի սափրած գլուխներով ու հաստ վզերով էին՝ ինձ մինչեւ իսկ թվաց, թե նույն ջահելներն էին, որոնք դեռ կարուտը չեմ առել իրարից:

Ես շրջվեցի հետ, բայց մի քանի քայլից կանգ առած: Ի՞նչ էր հետեւելու, եթե նորից նստեի մեքենան: Անիմաստ սպասում եւ տեղական մտածողությանն ու առանձնահատկություններին հարմարեցված օրենսդրության նոր գովերգումը... Արդեն հեռու չեմ քաղաքի կենտրոնից. Վզրեցի ոտքով շարունակել ճանապարհը: Բայց եթե խցանումը բացվեր, մեր մեքենան կիասներ ինձ ու որեւէ պատրվակով կստիպեին նստել: Ես անցա հակառակ մայթն ու սկսեցի վազել: Հազիկ էի շրջադարձից թեքվել, երբ խցանումը բացվեց՝ կարծես ի հեծուկս ինձ: Մայթը բոլորովին դատարկ էր՝ նորից վտանգ կար, որ մեքենայի միջից ինձ կնկատեն: Պետք էր շտապ կողմնորոշվել: Զախ կողմից մի ջրանցք թե գետակ էր՝ բազալտե բարձր

պատերով: Առանց երկար-բարակ մտածելու ցատկեցի նրա մեջ: Ուսրս ցավեցրի, բայց ոչ այնքան, որ չկարողանայի քայլել: Գետակը սարսափելի կեղտոտ էր, բայց քանի որ նաեւ ծանծաղ էր, ջրից դուրս ցցված մասերին ցատկութելով՝ հիմնականում խուսափում էի թրջելուց: Ճիշտ է, դա չօգնեց, որ անգինայից խուսափեմ...

Մարտինն աջ ձեռքով բռնեց կոկորդը եւ ցուցամատով ու բութով մի քանի անգամ տրորեց գեղձերը կզակի տակ:

## 7.

- Մի հարյուր յարդ «գետակիս» հետ միասին անցնելով՝ հասա մի կամքի, որի վրայով մեքենաների մեջ հոսք էր անցնում: Որեւէ տեղ աստիճաններ չեն երեւում, որ կարողանայի բարձրանալ: Ես քառասուն-հիսուն յարդ քայլելով՝ տեսա, որ մի քանի երիտասարդ մոտեցել են քարե պարսպին ու ինձ են նայում: Հարցրեցի, թե քաղաքի ո՞ր մասում եմ: Անգլերեն խոսում էին, ինձ հայտնեցին, որ ձախ կողմումս Երեւանի պետական համալսարանն է, ոռմանագերմանական լեզուների մասնաշենքը, որի ուսանողներն են իրենք, իսկ աջում՝ Հայաստանի Հանրապետության Ոստիկանությունը: Նրանք առաջարկեցին օգնել ինձ բարձրանալ, բայց նախ պարզ չէր, թե ինչպես էին դա անելու, ապա ինձ չգրավեց ոստիկանության անմիջական մոտակայքում թափառելու հեռանկարը: Ծնորհակալություն հայտնեցի ու շարունակեցի քայլել: «Իսկ դուք ի՞նչ եք անում Գետառում», - ձայն տվեցին ուսանողները: «Ջրոսնում եմ», - գոռացի ես: «Դուք ամերիկացի՞ եք»: «Ամերիկացի եմ»: «Երեւում է: Միայն ազատ մարդու մտքով կանցներ Գետառում զբոսնել: Մենք այսքան տարի է ապրում ենք Երեւանում, ոչ մի անգամ չենք փորձել»: Երեւի իշխանություններից էլ ոչ ոք չէր փորձել. գետակում այսուայնտեղ առնետների մռութեներ էին հայտնվում-կորչում, եւ դա ուսանողներին նոյնքան տեսանելի էր, ինչքան՝ ինձ, գումարած՝ գարշահոտությունը: Իմաստ կա՞՞, որ ես էլ իմ կողմից որեւէ բան ավելացնեի նրանց պատրանքները խորտակելու համար :

Ես հարյուր յարդի չափ Գետառում ոստոստալուց հետո նկատեցի ակից զարմանքով ինձ նայող մի անցորդի: Նորից հարցրեցի գտնվելուս տեղի մասին: Ասաց, որ ձախ կողմից զբոսայգի է, աջ կողմից՝ Ազգային անվտանգության ծառայությունը, Ոստիկանության մայրաքաղաքային վարչությունը, ապա՝ Ուզմական ոստիկանությունը: Ծաղրո՞ւմ էր ինձ, ի՞նչ է: Բայց ինչո՞ւ պետք է հենց այդ կերպ ծաղրեր: Շատ չէի անցել, երբ հանդիպեցի գետակի մեջ տնկած երկու մետաղյա սյուների, որոնք մեծ, խունացած վահանակ էին պահում: Բոլոր խոշոր քաղաքների նման՝ այստեղ էլ այն քողարկում էր քարուքանդ տարածք ու ինչ-որ շինարարություն: Վահանակը գովազդային չէր, այլ պատկերում էր երկու երեխայի՝ կարծ ոտքերով ու մեծ գլուխներով, չնայած հայ երեխաները նորմալ ոտքեր ու գլուխներ ունեն: Նրանք թափուտ, սեւ անտառից էին դուրս գալիս... նոսր անտառներով ու ծառերի կողմից աղքատ Հայաստանում: Նկարի տակ մի քանի լեզվով մակագրություն կար՝ «Ղեափ ապագա»: Հայտնի չէ, թե ինչո՞ւ էին հատկապես այդ երկուսը գնում ապագա: Կամ միգուցե Հենգելի ու Գրետելի հեքիա՞թն էր իհմք ծառայել

մտահղացման համար: Դատելով նրանից, որ վահանակը իին էր, հավանաբար երեխաներն այդպես էլ չէին կարողացել գտնել ապագա տանող ձանապարհը, երբ սեւ ուժերը կերել էին շաղ տված հացի փշուրները:

Ոտքերս սառչում էին թաց կոշիկներիս մեջ, ու ես որոշեցի դուրս գալ, ինչ էլ որ պատահի: Վահանակի հենասյան օգնությամբ մազցեցի վեր: Սյանը մի քանի նոր սոսնձած թուղթ կար, որոնք հայերեն էին՝ չհասկացա, բայց թռուցիկ էին հիշեցնում:

Երեւանում խմելու ջրի, ի դեա՝ սառն ու համեղ ջուր է, անվճար ցայտաղբյուրներ կան: Ոչ հեռու այդպիսին նկատելով՝ մոտեցա, ոտքից գլուխ լվացվեցի, նույնիսկ գուլպաներս ու կոշիկներս լվացի: Ժամը յորն էր: Չգիտես ինչո՞ւ՝ զգուշացա տաքսի նստելուց: Հարցրեցի մի քանի անցորդի, թե ինչպես կարելի է գնալ մետրոյի «Երիտասարդական» կայարան: Ցույց տվեցին երկու ձանապարհ. մեկը Գետառին գուգահեռ, այսինքն՝ ոստիկանական ու անվտանգության հաստատությունների կողքով էր բարձրանում՝ երրորդ խաչմերուկից պետք է թեքվեի ծախ, մյուսը հենց այն փողոցն էր՝ Թումանյանը, որի սկզբին ես այդ պահին կանգնած էի: Նրանով քայլելով՝ նույնպես երրորդ խաչմերուկից թեքվելու էի աջ, Աբովյան փողոց: Ես ընտրեցի երկրորդ տարբերակը: Աբովյան հազիկ մտած հիշեցի, որ իմ հյուրանոցը, որի անունն էր «Յուրաքանչյուր», նոյն այս փողոցում է: Հյուրանոցից էլ ճիշտ կլիներ խուսափել՝ ինձ այնտեղ ամպայման կփնտրեին: Հետ դարձա Թումանյան, շարունակեցի ձանապարհ մինչեւ հաջորդ խաչմերուկ, այնտեղից թեքվեցի աջ... եւ վերջապես բախտս բերեց՝ երկու փողոց հատելուց հետո տեսա ոչ թե մետրոյի կայարանը, այլ հենց իրար հակված երկու ձեռքերի արձանը:

Ժամը յորն անց էր քան: Նայեցի չորս կողման՝ մորուքավոր ծանոթս ոչ մի տեղ չկար: Ես սկսեցի աննպատակ դեսուդեն քայլել զբոսայգով..., եւ այստեղ նորից բախտս բերեց: Բավականին մեծ տարածության վրա նկատեցի մորուքավորի մեջքը. նա հեռանում էր՝ օրորվելով: Վազեցի ու հավասարվեցի նրան այն պահին, երբ պատրաստվում էր փողոցն անցնել: Ներողություն խնդրեցի, որ ուշացել եմ: Անմիջապես ուղղվեցինք մոտակա սրճարաններից մեկը, տեղավորվեցինք համենատարար մեկուսի սեղանի մոտ: Ինձ համար վիսկի պատվիրեցի, նա նախընտրեց տեղական գարեջուրը: Ցավոք, արդեն խմած էր, եթե չասեմ՝ հարբած: Հայերեն ինչ-որ բան ասաց, որը հետո թարգմանեց անգլերեն՝ բացատրելով, որ իրենց բանաստեղծ Զարենցի տողերն են:

- Գիշերը ամբողջ՝ հիվանդ, խելագար,  
Ես երազեցի արեւի մասին...

Հետո կրկնեց նոյն տողերը եւս մի քանի անգամ հայերեն ու անգլերեն: Նրան այդ սեւեռումից շեղելու համար հարցրի, թե ի՞նչ է խորհրդանշում երկու ձեռքերի արձանը:

---

\* Հատ ամենայնի, Մարտինը նկատի ունի «Անի» հյուրանոցը, որի անգլերեն գրության ձեւերից մեկի՝ Անի-ին, կարող է բարգմանվել «յուրաքանչյուր» (ծանոթագրությունը՝ հայերեն հրատ.):

- Իմ կարծիքով,- ասաց նա,- այնտեղ ջուրն է պակասում: Կուզենայի, որ արձանը գոնե նշանակեր՝ Ես լվանում եմ ձեռքերս: Բայց ավելի բազմախորհուրդ է ձեռքը ձեռք է լվանում:

- Ես սուների վրա թռուցիկներ նկատեցի. դրանք ընդդիմությունն է փակցնում, ինչի՞ մասին են:

- Իշխանությունը, ընդդիմության դեմ: Ես էլ չեմ կարծում, որ այդքան անվստահ են իրենց լրատվամիջոցների ազդեցությանը:

Մենք մի քանի բար էլ փոխանակեցինք, որից հետո ես անցա ինձ տաճող թեմային.

- Կարո՞ղ եք ինձ օգնելու Զորջին, նա «Նյու Յորք թայմսի» թղթակիցն է Հայաստանում: Ճանաչո՞ւմ եք նրան:

Հարբածությունն, այնուամենայնիվ, նրա զգոնությունը չէր բթացրել:

- Իսկ դուք ինչպե՞ս ինձ ներկայացաք Սեւանում, ես ձի՞շտ եմ հիշում, որ դուք նույնպես «Նյու Յորք թայմսից» եք:

- Այո:

- Կարո՞ղ եք որեւէ կերպ հաստատել, որ այդ թերթից եք:

Ես տվեցի այցեսոմս:

- Ես զգիտեմ, թե ինչո՞վ եմ նորից արժանացել անվտանգության ծառայությունների ուշադրությանը, որ արտասահմանցի գործակալ են ուղարկում ինձ մոտ:

- Ինչո՞ւ եմ գործակալ:

- Այդպիսի այցեսոմսը կարող էիք սարքել որտեղ ասես՝ մի քանի րոպեում: Բայց դա չէ զիսավորը. ուզում եք, որ ես հավատա՞մ, թե ուրիշ հնարավորություն չունե՞ք Երեւանում ձեր գործընկերոջը որոնելու, քան իմ՝ երեմնի լրագրողիս օգնությո՞ւնը:

Ես նրան ցույց տվեցի նաեւ վկայականս եւ ինքս էլ նոյն ակնկալիքով սպասեցի, այսինքն՝ ես էլ միամիտ չեմ: Նա ինձ տվեց մի այցեքարտ, որի նմանը երբեւ չեմ տեսել՝ վրան միայն անուն-ազգանունն էր՝ Զավեն Ավագյան, ուրիշ ոչինչ. ոչ կոչում, ոչ պաշտոն, ոչ տան կամ ինտերնետային հասցեներ, ոչ հեռախոս: Դա կարող էր նշանակել կամ այն, որ նա զրկված է այդ բոլորից, կամ՝ որ անուն-ազգանունն արդեն բավական է, ամեն ինչ ասում է: Ի վերջո, թերեւս ճիշտ կրահեցի ակնարկի իմաստը: Ես էի նրան ընտրել եւ այլ ելք չունեի, բացի վստահելուց... Նա հայացքը մեխել էր աչքերիս: Համարյա հակառակ իմ կամքի, խոստովանեցի, որ «Նյու Յորք թայմսի» կե՛ղծ թղթակցի եմ փնտրում: Քանի որ նա չէր դադարում նայել, ես շարունակեցի.

- Զորջն ինչ-որ ձեւով կապված է դատավարությունների ընթացքում մեղադրյալների «գործուն զղզման» հետ:

Նա լրեց որոշ ժամանակ, հետո ասաց.

- Հազիվ թե լավագույն օգնությունը կարողանամ ցուցաբերել ձեզ. Ես լրագրությունից վաղուց հեռացել եմ, բավականաչափ հետաքրքրասեր էլ չեմ, այդ պատճառով տեղեկացված չեմ... Բայց իմ սերնդի լրագրողների մեջ կան երկու հոգի, որոնք բոլորի մասին գիտեն ամեն ինչ: Դուք հեռախոս ունե՞ք:

- Ոչ, կորցրել եմ,- ասացի ես:

Իմ պատասխանը տարակուսանք հարուցեց, բայց նա ինձ հարցեր չտվեց: Գրպանից հանեց ավտոմատ-հեռախոսի մի մաշված քարտ.

- Մի խոչընդոտ կարող է լինել: Թեեւ այդ երկուսն արդեն թոշակառու են, բայց ի բնե չեն սիրում իշխանությունների հետ հարաբերությունները փչացնել: Միաժամանակ, վստահ են, որ ափսոսում են, որ գիտելիքների իրենց շտեմարանն ըստ արժանվույն չի օգտագործվում: Ամեն ինչ կախված է այն բանից, թե այս պահին ինչ տրամադրության մեջ կբռնացնեմ նրանց:

Նա գնաց մոտակա ավտոմատից զանգելու: Վերադառնալով՝ հուսադրեց ինձ.

- Բախտավոր աստղի տակ եք ծնվել. մեկը կտրուկ իրաժարվեց որեւէ տեղեկություն տալուց եւ ինձ էլ զգուշացրեց, որ հնարավորին չափ հեռու մնամ այս գործից, բայց մյուսը, նոյն զգուշացումն անելով հանդերձ, խոստացավ, որ եթե տասնիհինգ-քսան րոպեից զանգեմ, որոշ բաներ կասի՝ պայմանով, որ իր անունը չեմ հիշատակի ոչ մի երրորդ անձի մոտ:

Ես նրանից չհարցրի, թե ով է իր աղբյուրը... Եւ ինչպես տեսնում եք, նույնիսկ ձեր՝ իմ ընկերների առաջ խոսք չեմ դրժում:

- Ոչ նրանց, ոչ էլ ձեր անունը չեմ գրի,- վստահեցրի նրան: - Մանավանդ որ,- ավելացրի, - ինչքան գիտեմ, աներեւակայելի սկանդալների մեջ եք խառնված եւ շատ խոցելի եք: Հավանաբար շատ մեղադրանքներ կան, որոնցից չեք կարող պաշտպանվել:

- Դուք՝ ամերիկացիներդ, հսկական պրոֆեսիոնալներ եք,- հոգոց հանեց նա, բայց եւ զգացողություն ունեցա, թե հեզնում է՝ աչքի տակով հետեւում էր, թե ինչպես կընդունեմ իր խոսքերը:- Բայց ես պաշտպանվելու մտադրություն չունեմ: Մի տասնյակ մեղք էլ ինքս կարող եմ թվարկել՝ դա ի՞նչ կփոխի: Նշանակելու է, որ ես պետք է դադարե՞մ ճշմարտությունը տեսնել ու բարձրաձայն ասել, եթե որեւէ մեկը հարկ համարի ինձանից հարցնել:

- Ես ոչինչ չեմ արել այդ տեղեկատվությունը հայթայթելու համար,- նրա անկեղծությունը փոխադարձեցի ես,- այն ինձ մատուցվել է՝ առանց մատս մատիս խփելու:

- Պարզ է, ուրեմն իշխանությունն է հոգացել,- ասաց նա:- Մեզ հետեւել են Սեւանում: Բացառված չէ, որ մեզ արբանյակից են նկարել:

- Հայկական արբանյա՞կ գոյություն ունի,- ապշեցի ես:

- Այո, վերջերս է արձակվել: Մայրաքաղաքից երեսունինգ կիլոմետր հեռու հավաքվելու հնարավորություն շատերը չեն, որ ունեն, ինչի արդյունքում մարդիկ սկսել են փորք խնբերով իրար հանդիպել: Իշխանությունը հայտարարում է, որ նման խնբերի անվտանգությունն ապահովելու համար արդեն ոստիկանության ուժերը չեին բավարարում, ուստի արբանյակ ձեռք բերելը կենսական անհրաժեշտություն էր:

## 8.

Նա նորից գնաց զանգելու: Հետ եկավ համարյա վագելով՝ որքան որ ի վիճակի էր:

- Զեր Զորջն այս պահին մեզանից ոչ շատ հեռու մի սրճարանում է: Նա...

- Վեր կենանք,- առաջարկեցի ես,- մնացածը ճամփին կպատմեք: Ես ուզում եմ հանդիպել հետք:

Նա ոտքի վրա խմեց իր կիսատ գարեջուրն, ու մենք այգով շտապեցինք հետ դեպի երկու ձեռքերի արձանը: Ճանապարհին պատմեց, որ ինձ հետաքրքրող մարդ սկյուռքահայ է, տարիներ առաջ Հայաստանում երկու կին է սպանել, ինչը դատարանը համարել է անհրաժեշտ ինքնապաշտպանություն: Նա գործուն զղացել է եւ սկսել որոշակի ծառայություններ մատուցել իշխանությանը::: Ես չեմ ցանկանում սկանդալային լրագրողի (թեկուզե՛ նախկին) ուղեկցությամբ գնալ այս մի սրճարանը, որպեսզի կասկածի տեղիք չտամ, թե ոչ իշխանամետ մարդկանց հետ կապեր ունեմ, ուստի խնդրեցի նրան, որ Զորջի արտաքինը նկարագրի, եթե կարող է:

- Դա ինացել եմ,- ասաց նա.- գեր է, միջահասակից կարճ, փոքր մորուքով: Ակնոց երբեմն դնում է, երբեմն՝ ոչ:

«Ձեռքը ձեռք է լվանում» արձանի դիմաց փողոցն անցանք, ու նա ինձ ցույց տվեց ոչ մեծ արհեստական լճակի ափին գտնվող բավականին հաձելի սրճարանը, որտեղից ջազային խմբի նվազ էր հասնում մեզ: Ես հարցրի, թե ինչ գիտե «Գործուն զղումների» մասին: Ասաց, որ Վերջին տարիներին միայն մի քանի հոգի են ազատության մեջ հայտնվելուց հետո բողոքել, թե իրենց ծեծել են հենց դատի ժամանակ, դատարանի դահլիճում, երբ որ չեն ցանկացել զղալ: Բայց բազմաթիվ այլ մարդիկ, այդ թվում՝ նրանց մտերիմ, անել են, որ դա վար երեւակայության արյունք է:

Նա պատվիրեց շատ ուշադիր լինել սրճարանում անզգույշ արտահայտություններ թույլ չտալ, անցնող-դարձողներին, ինձ նայող անձանոթ մարդկանց չողունել, ինչպես որ ամերիկացիներս սովոր ենք: Այստեղ երբեմն գալիս են երկրի դեկավարները, որոնք իրենց կյանքն առանց ջազի չեն պատկերացնում: Սրճարանի հաճախորդները, որ կամ ներկա պաշտոնյաներ ու թարմ պաշտոնանկներ են, կամ նրանց խնջույքների հանդիսականներին զվարձացնող արվեստագետներ, տառապում են հավկուրությամբ՝ երեկոյան ժամերին չեն տեսնում, թե ինչ է կատարվում իրենցից նույնիսկ մի քանի քայլ հեռու: Եթե համկարծ ինձ մի փորձանք պատահի, կամ, Աստված մի արասե, Կկուն կանչի, նրանք ոչ միայն օգնության չեն հասնի, այլ նույնիսկ չեն վկայի տեղի ունեցածի մասին: Ես չուզեցի ժամանակ կորցնել՝ պարզելու կվի առեղծվածը, բայց քանի որ արդեն գիտեի, որ Հայաստանում «կվի կանչել» արտահայտությունը հոմանիշ է մեռնելուն, լրջորեն վախեցա ու նրան խնդրեցի սպասել լճակի դիմացի մայրի սրճարանում, մինչեւ դուրս կգամ: Ինքս հետո գնացի այնտեղ եւ, հակառակ նրա դիմադրությանը, նախօրոք վճարեցի մատուցողին երկու շիշ գարեջրի համար: Շրջանցեցի լճակը՝ դեռ անելիքս լավ չպատկերացնելով, բայց ինը որոշեցի, թե այցելուներից որ մեկն է Զորջը, ուղղակիորեն մոտեցա նրան եւ, մի քիչ խմածություն խաղալով, հնարավոր ամենաանմիջական տոնով ողջունեցի.

- Զորջ, ես Մարտինն եմ նույնպես լրագրող, մենք պետք է ծանոթանանք:

Նա նստած էր մի քանի գեղեցիկ հայ աղջիկներով շրջապատված: Շփոթված վեր թռավ տեղից, սեղմեց ձեռքս ու քարշ տվեց մի կողմ՝ մյուսներին միայն ասելով.

- Մենք մի քիչ առանձին խոսենք:

Նստեցիք անկյունի մի սեղանի մոտ:

- Դու ո՞վ ես, Մարտին,- հարցրեց նա:
- Մենք գործընկեր ենք՝ այսքանը բավական չէ՝, - պատասխանեցի ես:
- Որտեղացի՞ ես:
- Ամերիկացի:
- Իսկ ի՞նչ ես ամելու Հայաստանում:
- Ես մի վայրկյան միայն հապաղեցի:
- Նույնը՝ ինչ որ դու:
- Դու ի՞նձ ես փոխարինելու, - անհանգստացավ նա:
- Չէ, ինչո՞ւ. նույնն եմ ամելու, ինչ՝ դու:
- Իսկ ո՞ր լրատվամիջոցի կողմից:

Ներքին ձայն ինձ հուշեց, որ չասեմ ճշմարտությունը, «Նյու Յորք թայմսի» անունը չտամ:

- «Վաշինգթոն փոսթի»:

Նա զգիտես ինչու ծիծաղեց:

- Իսկ ես «Նյու Յորք թայմսն» եմ ներկայացնում: Ուրեմն իսկապես գործընկերներ ենք լինելու... Դատերին պետք է ներկա լինե՞ս, - հարցրեց նա:

Ես գլխով արեցի:

- Խորհուրդ կտամ օտարների մոտ այլեւս որպես լրագրող հանդես չգաս: Մենք լրագրող ենք միայն որոշակի դատերի ընթացքում, մնացած ժամանակ՝ քո ձաշակով. ուզում ես՝ գործարար եղիր, ուզում ես՝ իրավախորհրդատու... Բայց երկու ամերիկյան թերթը շատ չէ: Կարող էր քննը, ասենք, կանադական լինել:

Ես թոթվեցի ուսերս:

- Իսկ ի՞նչ ես արել, որ ստիպված համաձայնել ես այս գործին:
- Ղե... - ծոր տվեցի ես:
- Լավ, դեռ ժամանակ կունենանք այդ մասին խոսելու: Քեզ արդեն բացատրել են պարտականություններդ:
- Բացատրել են, բայց բարի մարդիկ ինձ հուշեցին, որ անկախ ամեն ինչից քեզ հետ խորհրդակցեն:

Զգացի, որ նրա ինքնասիրությունը շոյվեց:

- Գործը իրականում շատ չէ: Փոքրաթիվ համարներ կան, որ նախնական կայանքի ժամանակ չեն զղում, դատարանում էլ իրենց մեղավորությունը չեն ընդունում: Գնալով քչանում են նաեւ կամակոր մեղադրյալները, որ նախաքննության ընթացքում զղում են, բայց կասկած է մնում, թե դատարանում կիայտարարեն, որ «գործուն զղումն» իրենցից բռնի են կորզել: Այսպիսի դեպքերում է, որ տեղի են ունենում կեղծ բաց դատերը, որոնց ներկա ենք լինում մենք՝ որպես արտասահմանյան թղթակիցներ... Ես ամեն անգամ զարմանում եմ տեղացիների միամտության վրա: Արտասահմանյան լրագրողի ներկայությունից ոգեւորվելով՝ սկսում են բղավել, թե իրենց ցուցմունքները ծեծի, սպառնալիքների, այլ ձնշումների տակ են գրել: Եւ երբ այդ պահին նրանց է մոտենում որեւէ ոստիկան, որը կամ ծեծում է, կամ էլեկտրահարված կիրառում, մնում են ապշահար:

Ես մի կերպ ինձ զսպեցի, որ չբացականչեմ ինչպե՞ս թե ծեծում են:

- Իսկական դատավարությունը տեղի է ունենում միայն այն ժամանակ, երբ երեք անգամ անընդմեջ զղացած են լինում կեղծ դատերի

ընթացքում: Շատ կարեւոր է նաեւ, որ նրանք չկրահեն, թե երբ է արդեն իսկապես իրապարակային դատն ընթանում, որին ներկա են լինում իսկական լրագրողներ:

Ին գլխում դժվարությամբ էր տեղավորվում այդ ամբողջ մեխանիզմը, բայց իրավունք չունեի ցուց տալու, որ առաջին անգամ եմ լսում դրա մասին:

- Իսկ տեղական լրագրողնե՞՞րը, - հարցրեցի ես:

- Կան նաեւ տեղական թերթերի կեղծ թղթակիցներ: Թե՛ իշխանամետ, թե՛ ընդդիմադիր: Նրանց հետ կծանոթանա՞ս:

Ես ակսոսացի, որ չէի միացրել պայուսակումն գտնվող ձայնագրիչը. ո՞ւմ մտքով կանցներ, որ այսպիսի խոստովանություններ էի լսելու:

- Տեսնում եմ, որ վաստ չես անցկացնում ազատ ժամանակդ, Զորշ, - ասացի ես՝ ջանալով դերիցս դուրս չզալ:

- Քեզ հենց հիմա կծանոթացմեն աղջկմերի հետ, - ասաց նա:

Անկեղծ ասած, երբեմն ձանձրանում եմ նույն սցենարով ընթացող դատավարություններից, ամեն ինչից, աշխատում եմ ինքս հետաքրքիր դարձնել իմ կյանքը: Վերջերս մի այնպիսի խաղ խաղացի...

Նա դադար տվեց. երեւի տատանվում էր՝ մինչեւ վերջ անկեղծանա՞ ինձ հետ, թե՞ ոչ:

- ...իմանալով, որ առաջիկա օրերին դատ չունեմ, գնացի մի պատահական գյուղ, ասացի, որ սկյուռքահայ բարերար եմ, ուզում եմ անձանք կազմել կարիքավորների ցուցակը, որոնց ուզում եմ օգնել: Գյուղի կեսը կարիքավոր էր, ոմանք էլ կային, որ այդպես էին ձեւացնում, որ ինչ-որ մի բան փախցնեն: Մրանք մի քանի օր շարունակ ինձ համար հյուրասիրություններ կազմակերպեցին: Ես իշեւանել էի մի որբեւայրի կնոջ մոտ, որտեղ իին գորգ էի նկատել՝ տնից տուն անցնելիս: Երբ որ քեֆերից հոգնեցի, այդ կնոջն ասացի, թե շտապ պետք է ուրիշ մարզ այցելեն, եւ խնդրեցի, որ իր մոտ պահի իմ ութ հազար դոլարը: Փոխարենը, որպես գրավ, պահանջեցի իին գորգը, վահ ոսկե խաչն ու ուրիշ մի քանի մանր-մունր բան: Ծրարի մեջ, որտեղ փողը պետք է լիներ, դրել էի դատարկ թղթեր, որոնցից մեկի վրա գրել էի՝ «Տեսա՞ր, թե ինչ եղավ»... Պատկերացնո՞ւմ ես, որպեսզի արկածն ավելի գրավիչ դարձնեմ, իմ իսկական անունով էի ներկայացել... Եթե բռնվեի, մեկ է, չէի պատժվի, բայց չեմ կասկածում, որ բոլորը կարծել են, թե անունը կեղծ կլինի, ու հենց այդ անունով որեւէ մեկին չեն փնտրել...

Նա հիշեց: Ես ստիպեցի ինձ ծիծաղել:

- ...Բայց ամենահետաքրքիրը շարունակությունն է: Մեկ ուրիշին դատեցին որպես կեղծ Զորշի, որի կեղծ դատավարությանը ես ինքս ներկա էի որպես արտասահմանցի լրագրող: Ենթադրում եմ, որ ընդդիմության որեւէ կողմնակից էր... Դե, ոստիկաններին էլ կարելի է հասկանալ, նախ՝ չբացահայտված գործը վատացնում է նրանց աշխատանքային ցուցանիշները, հետո էլ՝ ինչքան կարելի է գենք ու թմրադեղեր պահելու համար դատել ընդդիմադիրներին. ի վերջո խոսքը մաֆիոզների մասին չէ, այլ քաղաքական գործիչների... Մի խոսքով, համառներից էր... շաբաթներ քաշեց, մինչեւ զղաց...

Զորջն ինձ հրավիրեց իրենց սեղանին՝ գործերը չեն փախչի: Ես հնարավորին չափ անհոգ էի պահում ինձ, կատակում աղջկների հետ, բայց երկար չկարողացա դիմանալ: Վեր կացա՝ ասելով, թե նյութ ունեմ գրելու: Զորջի տարակուսած հայացքից հասկացա, որ վրիպել եմ:

Մատնեցի, որ իսկական լրագրող եմ, երբ որ նրա աչքին՝ չէի: Բացի այդ, ինձ պատվիրել էր այլ մասնագիտության տեր ներկայանալ: Ուշ էր սխալս ուղղելու համար, հրաժեշտ տվեցի նրանց: Երբ, լճակը շրջանցելով, մնուեցա Զավենին, նա արդեն գարեջրերը դատարկել - անցել էր օղուն, որը շշով դրված էր առջեւը:

- Հանգիստ եղեք, սրս համար ես եմ վճարել,- ասաց նա:

Ես նստեցի ու գլուխս քաշեցի նրա լցրած օղին: Հետո մանրամասն պատմեցի՝ ինչ որ իհացել էի Զորջից: Նա ձեռքերով դեմքը փակել ու լսում էր: Այնպես քարացած, որ երբեմն թվում էր, թե քննել է: Երբ վերջացրի, հարցրեցի, թե ինչպես է զնահատում այս բոլորը: Նա ձեռքերը հեռացրեց երեսից:: Քրտինքի՞ց, թե՝ արցունքներից դեմքը թաց էր:

- Ես ի՞նչ իրավունք ունեմ որեւէ մեկին զնահատական տալու... Մենք ինքներս այս վիճակին հասցրինք երկիրը, դրժեցինք մեր տված ու չտված խոստումները... Հուսախար արեցինք, դավաճանեցինք նրանց, ովքեր մեզ հավատում էին: Մի բան շտկելով՝ փշացրինք տասն ուրիշ բան:

- Ո՞ւր էլ եք խառը այս պատմությանը,- սարսափեցի ես:

- Չէ: Այս մեկին՝ չէ: Վաղուց ամեն ինչից մի կողմ եմ քաշվել... Բայց մեծ հաշվով բոլորս ենք խառը: Ես նրանցից մեկն եմ, ով ապրել է կոմունիստների օրոք եւ ատում էր նրանց: Ով ժամերով ու օրերով խոսել է, թե մեր ավելի վաղ անցյալում ի՞նչը պետք էր, ի՞նչը պետք չէր անել, եւ հուսահատովում, որ գաղութ ենք, որ մեր պատմությունն օտարներն են գրում... Կատարվեց անհավատալի բան... Կայսրությունը փլվեց, դարձանք մեր գլխի տերը: Գործելու հնարավորություն ստացանք, հերթը մեզ հասավ... Հասկանում եք՝ ՄԵԶ ՀԵՐԹ ՀԱՍՍՎ... Ազատ խոսում էինք, սուս ու մեռած օրենքները փոխում նորերով, մեր պատերազմը վարում հանուն հայրենակիցների... Մեր շանսն էր, որը ձեռքից թաց թողեցինք... Մեկն այնքան գոռողացավ, որ կարծեց, թե ժողովուրդն է իր համար, ոչ թե ինքը՝ ժողովրդի: Մյուսը շտապեց առաջինը Վայրի կապիտալիզմի օրինակ ծառայել: Ոմանք բացարձակ իշխանությամբ հրապուրվեցին: Շատերը մեծ գայթակողությունները մերժեցին, մանրերին չոփացան: Բոլոր աչքի ընկնող դեմքերը հայ էին, իրաք՝ համախոհ, բայց ամեն մեկն սկսեց իր սեփական խաղը խաղալ՝ անթիվ նվիրյալներից ընտրելով ամենամորթապաշտներին, որ ձեւացնում էին, թե ստրուկի պես հավատարիմ են, բայց առաջինը ուրացան իրենց «տերերին»: Նոր գաղափարների քարոզիչները, որոնցից մեկն էլ ես էի, ավելի հաճախ թիմը պաշտպանեցին, բան՝ ճշմարտությունը... Բազմությունն առաջին խանդավառք ժամանակաշրջանում էր:

...Ո՞ւր են իիմա նրանք՝ առաջին հեղափոխականները. մի քանիսը սպանված են, այլոք՝ վարկաբեկված, ո՞րը վտարանդի է, ո՞րը փակվել է իր պատյանում: Ո՞ւր է անկախությամբ խանդավառք ժողովուրդը...

Արդարացումներ հիմա էլ ինչքան ասես կգտնեմ: Հայաստանը շափից դուրս երկար ժամանակ չէր ունեցել ապահով ու բարեկեցիկ կյանք, ինչպես՝ 70-80-ական թվականներին, որի գինը մարդկության պատմության ամենադաժան ու անհեթեթ բռնապետություններից մեկին՝ սովետական քրեապետությանը հարմարվելն էր: Մենք չափից դուրս երկար չէինք ունեցել հաղթանակներ, որպիսին ունեցանք անկախության սկզբին՝ անցած դարի իննսունական թվականներին, այդ պատճառով չոգեւորվեցինք հաղթանակով, գերադասեցինք բողոքել դավաճանությունից: Հենց որ մեկը խփվում էր կրվում, ասում էին՝ թիկունքից է խփվել: Բայց բոլոր հրամանատարները թիկունքից խփվեցին: Նույնիսկ՝ գինվորնե՞րն էլ: Ինքներս մեր դե՞մ էինք պատերազմում չկա՞ր լավ գինված ու մեր արյունը խմելու պատրաստ թշնամին: Այդ դեպքում ինչպե՞ս ձեռք բերվեց հաղթանակը:

Առաջնորդներն անփորձ էին: Հեղափոխականներ էին՝ անհամբերներ, որ ոչ մարդկանցից վախ ունեին, ոչ՝ Աստծուց, մեծ գաղափարներով տարված՝ ոչ իրենց են խնայում, ոչ՝ շրջապատին: Որ կարծում էին, թե կարգերը փոխելով՝ ինքնին կփոխվեն մարդիկ, որոնց հոկա կայսրությունը՝ Սովետական Միությունն էր ճնշել ու ծեւախեղել բոլոր միջոցներով... Այս բոլորով հանդերձ, անհամեմատելի էին այսօրվա անգրների հետ, որոնց ախորժակը հագեցնելու համար երկիրը պետք է լեշի վիճակում լինի, որ հոշոտմանը չդիմադրի:

...Արդարացումներ... Բայց մի՞նչեւ ավելի հեշտ է եղել այն ժամանակներում, երբ մեր նախնիներն էին գործում ու... սխալվում:

Երանի՝ հիմա երկու հազար քսանչորս թիվը չիներ... Որեւէ հրաշքով երեսուն-քառասուն տարի հետ տեղափոխվեինք, լավ, գոնե քսան տարի՝ երկու հազար չորս թվական: Կարծում եմ, որ այդ ժամանակ էլ ոեւ պայքարի միջոցները սպառված չեին, շատ շատերի համար ուշ չէր, որ հետ դառնային, զոհողությունների գնով փոխեին իրավիճակը: Գուցեւու հաջողվե՞ր թույլ չտալ, որ չարիքն այսքան արմատավորվեր:

## 10.

Իմ մեջ բազմաթիվ հարցեր էին ծագում, քանի դեռ խոսում էր, բայց երբ ավարտեց, անկախ իմ կամքից, դարձա Միացյալ Նահանգների թեմային: Մեր նախորդ նախագահների թերությունների, լրագրողի առջեւ ծառացած երբեմն անորսալի սահմանափակումների, իմ չիրականացած ծրագրերի... Դա հայկական ազդեցության արդյունքն էր: Նրանք բոլորը խոսում էին, թե ինչ պետք էր անել երեկ, ոչ ոք չէր ասում, թե ինչ անեն այսօր կամ վաղը:

Ինչոր մի պահի նա իմ մենախոսությունն ընդհատեց.

- Մի րոպե... մի րոպե սպասեք... Դիմացի սրճարանում ինչ-որ բան է կատարվում:

Ես էլ նայեցի այդ կողմը: Տասը-տասներկու մարդ էր լցվել սրճարան, բոլորը՝ տղամարդիկ, չորս-հինգը շրջապատել էին Զորջին: Մի քանի սեղանների հաճախորդներ սկսել էին հապճեա հեռանալ, ուրիշները՝ կոստյումավոր, փողկապավոր, միջին տարիքի տղամարդիկ, որոնք, այնտեղ էի դեռ նկատել՝ ջագն այնքան լուր ու ուշադիր էին լսում, կարծես

աշխատանքի էին եկել, տեղներից վեր էին կացել ու չորս կողմն էին նայում՝ անելիքները չիմանալով:

- Հնարավոր է, որ ձեզ են փնտրում:

Ես մի ակնթարթ խուզապ ապրեցի: Քիչ էր մնում՝ հարցնեի, թե ինչպես կարող եմ Գործուն զղջման հեռախոսով զանգել եւ հայտնել, որ վատ արարք եմ կատարել, բայց ամաչեցի այդ մղումիս համար: Հետո մտքովս անցավ, որ մոտենամ ինձ փնտրողներին եւ, եթե մտադիր են ինձ կալանավորել, մաշկիս վրա փորձարկեն հայկական դատական համակարգը... Դա էլ ելք չքվաց. եթե դիմանամ ու չզղջամ, կբացատրեն նրանով, որ ամերիկացի եմ, իրենց մեթոդներն ինձ վրա չեն ազդում:

- Եկեք հեռանանք այստեղից, - առաջարկեցի ես:

Մենք դուրս եկանք: Զավենն ինձ տարավ այնպես, որ շրջանցեցինք Հյուսիսային պողոտան՝ իր եռուգեռով, եւ հայտնվեցինք մի խաղաղ փողոցում: Երեկոյան ինն անց կես էր, բայց դեռ լույս էր:

- Գուցե զնամ որեւէ հեռուստատեսություն եւ Ելո՞ւյթ ունենամ:

Նա քննիծաղեց.

- Նրանք ոիմելու են իշխանությանը, որպեսզի հավանություն ստանան:

- Թերթերն էլ արձակուրդում են:

- Արձակուրդում են:

- Մնում է գնալ ամերիկյան դեսպանատուն:

- Եթե լրջորեն սկսել են զբաղվել ձեզանով եւ մտադիր են խոչընդոտել, որ «գործուն զղջման» մասին հավաքած տեղեկությունները հրապարակեք, ուրեմն ձեզ կդարանակալեն նաեւ դեսպանատան մատուցներում: Ճշշտ կլինի, որ թաքնվեք որեւէ հուսալի, աչքից հեռու տեղում, օրինակ՝ Բանգլադেշում, եւ փորձեք հեռախոսով կապվել դեսպանատան աշխատակիցների հետ...

«Բանգլադեշ» բարի վրա ես մտածեցի, որ արդեն ցնորվել եմ, բայց նա բացատրեց, որ դա Երեւանի մի արվարձանի անունն է: Ես հաճածայնեցի: Մենք զնացինք «Բանգլադեշ», որը բարձրահասակ շենքերով քաղամաս էր, մտանք մի տուն, որտեղ ապրող տարեց ամուսիններին տեսել էի Սեւանում վրանի մոտ: Նրանք ասացին, որ հեռուստատեսությունները հայտնել են, թե բանտարկյալ է փախել, չնայած օրն ուրբաթ չէ, այլ՝ շաբաթ երեկո: Դա նշանակում էր, որ ճանապարհները փակ են:

- Լա՞վ եք իրար խաչնել սրանց, - ասաց նիհար, միջահասակ ամուսինը, որ անգլերեն չգիտեր՝ թարգմանությամբ շփվեցինք:

- Իսկապես ինձ հե՞տ եք կապում ճանապարհները փակելը, չափազանցություն չէ, - հարցրեցի ես:

- «Գործուն զղջման» տասնամյա հորելյանն է տապալվում, - իիմնավորեց մորուքավորը:

- Եթե ձեր՝ մի հոգու «պատվին» բանտարկյալ է փախել, շնորհավորում եմ. վաղուց նման բան չէր եղել, - ասաց բարձրահասակ, նիհար կինը:

Շնորհավորանքն ինձ շատ քիչ մխիթարեց.

- Բա իիմա ես ի՞նչ եմ անելու:

- Կմնաք մեզ մոտ: Կորդեգրենք... Երկու տղա ունենք, դուք էլ կլինեք երրորդը,- ասաց ամուսինը:- Ուղղակի, տնից չեք կարողանա դուրս գալ:

Ես ուզում էի առարկել, բայց դեմքների արտահայտությունից հասկացա, որ կատակ են անում:

- Կամ փորձենք ձեզ գաղտնի իրան ուղարկել. կարծեմ, թեհրանը նորից պարտիզաններից անցել է ամերիկացիների ձեռքը,- առաջարկեց կինը:

- Ես էլ այդպես գիտեմ, բայց մինչեւ թեհրան հայկական սահմանին հարող տարածքները դեռ պարսիկներն են վերահսկում, չէ՞,- ասացի ես՝ հետո միայն զիսի ընկնելով, որ սա էլ էր կատակ:

Զրույցին գուգահեռ կինը սեղան էր բացում՝ չնայած ուշ ժամին: Ես դեմ չեմ զգացի, որ քաղցած եմ՝ իմ յոգուրտները նույնիսկ չեմ կերել: Բայց ավելի կարեւոր գործ ունեի.

- Թույլ կտա՞՞ք զանգեմ: Խնդրեմ, որ դեսպանատնից գան ինձ տանեն իրենց մոտ: Ի վերջո, մի գիշերվա հարց է՝ վաղն առավոտյան տասնմեկին ինքնաթիռս թռչում է: Թող ձամպրուկս էլ հյուրանոցից իրենք վերցնեն:

- Իսկ եթե պարզվի, որ ամերիկյան դեսպանատո՞ւնն էլ է կեղծ,- հոնքերը բարձրացրեց կինը:

- Մեզ նման աղքատ պետությունն այդ մասշտաբի կեղծիք չի կարող իրեն թոյլ տալ,- հակածարեց ամուսինը:

Նրանք անընդհատ հումոր էին անում՝ կարծես մոռացած իմ վիճակի վտանգավորությունը, թեեւ երեւի իրենք էլ էին իրենց հարվածի տակ դրել՝ իմ փրկության հոգը ստանձնելով: Ես բարձրացրի լսափողը, բայց հապաղեցի համարը հավաքել. շաբաթ օր էր, եթե դեսպանատան հեռախոսները լսում էին, հնարավոր էր, որ հայերը կանխեին մերոնց: Կախեցի հեռախոսը՝ որոշելով մի փոքր էլ ծանրութեթեւ ամել ամեն ինչ:

- Նկարիչներ եք,- իր ընկերներին ասաց մորուքավորը,- ձեր ավտոմեքենայի համարին կլոր թվեր նկարեք, ասենք 10-100 կամ 333-33, մենք ինքներս էլ առավոտյան Մարտինին միանգամից կտանենք օդանավակյայն: Ուստիկաններն ու զինվորները չեն համարձակվի ստուգել:

Այս առաջարկը եւս ինձ կատակ թվաց, բայց արդեն լուրջ էր: Պարզվեց, որ նման համարները Հայաստանում տրվում են միայն իշխանավորներին կամ ունեւորներին, ինչի շնորհիկ փողոցում կանգնած կարող ես իմանալ, թե իր ազդեցությամբ ո՞ր տեղն զբաղեցնող կլանի ներկայացուցիչ է անցնում տվյալ պահին:

Կինն առարկեց, թե իրենց մեքենան շատ է իին՝ ոչ ոք չի հավատա, որ կարող է կլանի անդամի պատկանել: Նրանք քննարկեցին իրենց ընկերների մեքենաները, բայց չհայտնաբերեցին պահանջված թանկության մեկը:

Մենք սկսեցինք ուտել ու խմել: Այս տանը կենաց չեմ ասում, բայց բաժակներն անպայման չխկացնում էին: Շուտով տունը լցվեց մարդկանցով: Եկան տանտերերի տղաները, որոնցից մեկը բոլորովին հայի նման չէր՝ խարտյաշ էր ու կապուտաշյա, երեխաների կնքահայրը, որը սովետական ատոմային սուզանավում էր աշխատել, բեղավոր հարեւանը, որն իր բնակարանում աձեցրած մրգեր բերեց: Ուղիների որոնումը շարունակվեց ավելի լայն կազմով: Գիշերվա երկուսն անց էր, երբ

տանտերը մտահղացավ մի ծրագիր, որը բոլորս հավանեցինք:  
Ճանապարհվել երկու մեքենայով: Առաջին մեքենան չի ենթարկվի կանգ  
առնելու ոստիկանների պահանջին, նրան կսկսեն հետապնդել, այդ  
խառնաշփորի մեջ ես երկրորդ մեքենայով կհատեմ պահակակետը:

Գիշերը քիչ քննեցինք մինչեւ որոշեցին, թե ովքեր են մասնակցելու  
արկածախնդրությանը, ում ներգրավեն երկրորդ ավտոմեքենայով,  
զանգեցին-գտան ու պայմանավորվեցին հետը: Առավոտյան ութին իր  
մեքենայով եկավ համարյա մորուքավորի տարիքի մի կին՝ եռանդուն ու  
բաց դեմքով: Նա լավ խոսում էր անգլերեն, տարիներ շարունակ զբաղվել  
էր զանգվածային լրատվամիջոցների անկախության աջակցելով, եւ մեր  
կարծ խոսակցության ընթացքում պնդում էր, որ այս վիճակը երկար չի  
տեսի, որ հայ լրագրողներն ընթոստանալու են: Ժամը իննին նստեցինք  
մեքենաները: Նկարիչ ամուսինները թխահեր որդու հետ՝ իրենցը (որի նման  
իին մեքենա ես չեմ տեսել. հարցրեցի մակնիշը, ասացին՝ «Ժիգուլի» է), ես,  
երբեմնի լրագրողը, խարտյաշ տղան՝ մյուս մեքենան, որն ավելի թարմ էր:  
Շատ չէինք գնացել, երբ նկարիչների մեքենան կանգ առավ՝ պարզվեց, որ  
ջուրը եռացրել է: Զուրը փոխեցին, բայց դա կրկնվեց եւս մի քանի անգամ:  
Ես սկսել էի վախենալ, որ ինքնաթիշից կուշանամ, նույնիսկ կասկածեցի, որ  
այս բոլորն էլ խաղ է, իսկ ինձ շրջապատողները՝ դավադրության  
մասնակիցներ... բայց շուտով տեսա, որ մոտենում ենք ոստիկանական  
պահակակետին:

Սիա այդտեղ էր, որ պատահեց անկանխատեսելին: «Ժիգուլին»,  
որից մեզ չորս-հինգ մեքենա էր բաժանում, արագացրեց ընթացքը, անցավ  
ոստիկաններին ու զինվորներին եւ... փրթփրթալով ու հետուառաջ  
ցնցվելով կանգ առավ: Պահակակետից նույնիսկ զննացին նրա կողմը: Այդ  
ժամանակ խարտյաշ տղան՝ Վահագնը, որի անունը թաքցնելն իմաստ  
չունի,- իիմա կիմանաք, թե ինչու,- իջավ մեր մեքենայից՝ ասելով.

- Կիանձնվեմ՝ իբր թե ես եմ ամերիկյան լրագրողը, որին փնտրում են:  
Ես չհասցրի արձագանքել: Նա անգլերեն խոսում էր հայկական  
ուժեղ շեշտադրությամբ, միայն դա բավական էր, որ իմաստագրկեր նրա  
քայլը: Բայց ոստիկաններն, ըստ երեւոյթին, ոչ մի շեշտադրությամբ չէին  
խոսում՝ նրան նստեցրին իրենց մեքենաներից մեկը եւ բացեցին  
մայրուղին...

Ես վերջինը բարձրացա ինքնաթիռ:

## 11.

- Իսկ ո՞ւր է քո հոդվածը,- հարցրեց Մարտինին Աննան,- արդեն մի  
քանի օր է Նյու Յորքում ես, ինչպե՞ս է, որ այդքան հետաքրքիր նյութը չես  
տպել:

- Խմբագիրը ձգձգում է, ասաց, որ ավելի հրատապ նյութեր կան՝  
Հայաստանը հետաքրքիր թեմա չէ: Խոստացավ, որ բոլոր դեպքերում իմ  
հինորարը կստանամ, ինչպես որ մեր պայմանագրով նախատեսվում է,  
բայց հոդվածիս տպագրության ժամկետը թողնեմ իր հայեցողությանը:  
Հետո փոխսխմբագիրն ինձ խոսքի մեջ ասաց, որ մեզ մոտ ուժեղ հայկական  
լորի կա, որին դուր չի գալիս, երբ ամերիկյան ՉԼՍ-ները վատ են խոսում  
իրենց պատմական հայրենիքի մասին՝ թշնամիներին ուրախացնելով: «Նյու

Յորք թայմսը» Հայաստանի մասին տարեկան մի նյութ տպի-չտպի, երկու հազար քսանշորսն էլ ԱՄՆ-ի նախագահի ընտրության տարի է, ավելի լավ է հայկական ծագումով ընթերցողներին չնեղացնել, եթե նրանց դուր է գալիս, որ Հայաստանի կառավարության մասին ասվի կամ լավ, կամ ոչինչ:

- Իսկ եթե ուրիշ թերթում տպե՞ս,- հարցրեցի ես:

- Իրավունք չունեմ՝ պայմանագիրս թույլ չի տալիս:

Հարեւան սեղանին բաց-դեղնավուն կոստյումով, կարճ խուզած սեւ մազերով, հաստ վզով մի մարդ նստեց եւ սկսեց գրեթե անթաքույց մեզ նայել: Նրա հայացքը սեւեռուն էր, թեեւ՝ ոչ կաչուն: Թշնամական էլ չէր, ավելի շուտ՝ հետաքրքրասեր-գործնական: Մարտինը, որ մեջքով էր նստած դեպի նա, նկատելով Աննայի ու իմ հաճախակի հայացքները դեպի անձանոթը, շուր Եկավ նայելու: Նրա արձագանքը կայծակնային էր. գրպանից համեց իր նոր տեսախոսն ու սկսեց համար հավաքել... Հետո նոյնքան կտրուկ տեսախոսը դրեց սեղանին ու աչքերը հառեց հեռուստացույցին: Միացված էր այն ալիքը, որը մշտապես Սպիտակ տունն էր ցույց տալիս:

- Նախագահն ինչո՞ւ Օվալածեւ առանձնասենյակում չէ,- հարցրեց նա այնպիսի տագնապով, կարծես Նախագահին էր ուզում գանգել ու տեսավ, որ տեղում չէ:

- Ինչքան հասկացա, զուգարան է գնացել,- ասացի ես՝ հեռակառավարիչի կոճակները հերթով սեղմելով: - Ուրիշ հնարավոր տեղերում նոյնպես չկա:

- Իմիջիայլոց, այսօրվա մեջ արդեն երրորդ-չորրորդ անգամն է, որ մի քանի րոպեով անհետանում է,- ավելացրեց Աննան:

- Միգուցե գաղտնի բանակցություննե՞ր է վարում ժողովրդի թիկունքում,- ասաց Մարտինը՝ Երեւի կատակով, բայց շատ լարված էր՝ հնարավոր չէր կրահել:

- Երեւի պարզապես լուծ է,- մարդկանց մասին նախեւառաջ լավը մտածելու իր սովորությամբ փորձեց Նախագահին արդարացնել Աննան:

- Այդ դեպքում թող զուգարանում տեսախցիկ դնեն, որ ժողովուրդն ավելորդ կասկածներից չտանջվի,- ասացի ես:

- Լավ միտքս զցեցիք, գնամ զուգարան,- տեսախոսը գրպանը դնելով՝ հանկարծ տեղից ելավ Մարտինը:

Նրա դեմքին ժախտի նմանություն էր պատկերված: Ես ու Աննան լուռ էինք՝ ճնշված այդ փոքրիկ Երկրի մասին Մարտինի պատմածներից:

Մարտինի գնալուց քիչ անց մեր սեղանին մոտեցավ դեղին

կոստյումավորը: Նա բարեւեց եւ նստեց՝ առանց թույլտվություն հարցնելու:

- Չեր ընկերը լավ երեւակայություն ունի: Չէի ուզում ականջ դնել,  
ուղղակի մոտ էի նստած, այդ պատճառով լսում էի... Ես ՄԱԿ-ում  
Հայաստանի ներկայացուցիչն եմ,- նա այցեքարտերի ոսկեգույն կամ  
միգուցե ոսկե տուփից դուրս քաշեց մեկը, ցուցադրեց ինձ ու Աննային,  
բայց չտվեց, նորից հետ դրեց:

- Որպեսզի չմտածեք, թե մեր կառավարությանն եմ ուզում  
պաշտպանել, ես միայն վիճակագրական տվյալներ կասեմ, որոնք  
միջազգային կազմակերպությունների տեղեկատուններում էլ կան: Միայն  
Երեւանում գործում է քսան հեռուստատեսություն, որոնցից մեկն է միայն

պետական, նույնիսկ պետական էլ չէ, այլ հասարակական է, ինչպես դուք եք ասում, մյուս բոլորը մասնավոր են: Հնարավո՞ր բան է,, որ դրանք բոլորն իշխանության ազդեցության տակ լինեն...»

Նրա ձախ ձեռքի ձկույթին խոշոր մատանի կար, իսկ մատներին՝ անգլերեն դաշվածք՝ «Չեմ նոռանա մայր հայրենիքս»: Աջ ձեռքին ջրահարս ու խարիսխ էր դաշված, մատներին՝ նույնպես տառեր, բայց՝ ռուսերեն, որը ես չէի հասկանում, միգուցե նույն բանն էր գրված:

Ես իիշեցի, որ նա կողքի սեղանին նստած չէր, երբ Մարտինը պատմում էր Հայաստանի հեռուստատեսությունների մասին:

- Առաջիկայում մենք նշելու ենք հացահատիկի ու խաղողի առաջին մշակման տասնիննգհազարամյակը: Ես կմիջնորդեմ, որ ձեզ հրավիրեն Հայաստան, որպեսզի ձեր աչքերով տեսնեք...

- Իսկ ես առաջարկում եմ ձեզ հեռանալ, քանի որ առանց հրավերի եք նստել մեր սեղանին,- ընդհատեցի ես:

Նա հեգնանքով օրորեց գլուխն ու վեր կացավ:

- Իզուր այդպես կոպտեցիր, Պոլ,- հանդիմանեց Աննան:- Ձեզ չի՝ թվում, որ Մարտինը տեղ-տեղ չափազանցնում էր... Տեսա՞ր, թե ինչ տատու ուներ... Ուրեմն առաջադիմական պետություն է, որ ՄԱԿ-ում իր ներկայացուցչին արտոնում է դաշվածքներ նկարել մարմնին: Դա նույնիսկ մեր երկրում կամ Եվրոպայում է բացառված:

Ես ձայն չհանեցի. ինձ անհանգստացնում էր այն, որ Մարտինն ուշանում է: Մի քիչ սպասելուց հետո գնացի զուգարան: Այնտեղ ոչ ոք չկար՝ բոլոր խցիկները բաց էին: Երբ վերադարձա մեր սեղանի մոտ, Աննան չկար: Նա առանց հրաժեշտ տալու չէր գնա՝ երեւի դրսում է ինձ սպասում, մտածեցի: Մոտեցա բարին, վճարեցի ու դուրս եկա: Ոչ Աննան, ոչ Մարտինը չին երեւում: Մի քանի քայլ հեռացա սրճարանի մուտքից, որ տեսախոսով սկսեմ ընկերներիս փնտրել: Հանկարծ մյուս մայթին նկատեցի դեղին կոստյումավորին: Ես արագ կտրեցի-անցա Քառասուներկուերորդ փողոցը...

*Մայիս-հուլիս, 2024 թվական  
Թարգմանությունը՝ Կահրամ Մարտիրոսյանի*